

ՏԱՐԵԿԱՆ ԲԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024

ANNUAL REPORT



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

CONTENTS

Ֆինանսական արդյունքներ	3
Financial results	
Խորհրդի նախագահի ուղերձը	5
Message by the Chairman of the Board	
Վարչության նախագահի ուղերձը	9
Message by the Chairman of the Executive Board	
Պատմական ակնարկ	14
Historical overview	
Ակտիվներ	28
Assets	
Հաճախորդներին տրված վարկեր	29
Loans to customers	
Ներդրումային արժեթղթեր	30
Investment securities	
Պասիվներ	30
Liabilities and Capital	
Պարտավորություններ	31
Liabilities	
Կապիտալ	32
Capital	
Եկամուտներ և ծախսեր	33
Income and expenses	
Շահույթ, շահութաբերություն	34
Profit, profitability	
Ռիսկերի կառավարում	34
Risk management	
Բանկի ներքին հսկողության համակարգ	37
Internal control system	
Ծառայություններ և նորամուծություններ	38
Services and innovations	
Վճարահաշվարկային ծառայություններ, փաստաթղթային գործառնություններ	39
Clearing services, documentary operations	
Կադրային քաղաքականություն	40
Human resources	
Մասնաճյուղային ցանց	41
Branch network	
Անկախ աուդիտորական եզրակացություն	46
Independent auditor's report	
Հաշվետվություն ֆինանսական վիճակի մասին	56
Statement of financial position	

Հաշվետվություն շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին	57
Statement of profit and loss and other comprehensive financial results	
Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին.....	59
Report on cash flows	
Հաշվետվություն սեփական կապիտալում փոփոխությունների մասին	61
Report on changes in owner's capital	
Հաշվետվություն հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ	63
Report on main regulatory standards	

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
Կորպորատիվ կառավարման
տարեկան հայտարարագիր

ARMECONOMBANK OJSC
Corporate governance
annual declaration

https://www.aeb.am/uploads/korporativ_karavarman_haytaragir_2025.pdf

Ցուցանիշներ / Indicators	31.12.2022	31.12.2023	31.12.2024
Ընդհանուր ակտիվներ (մլն. դրամ) Total assets (mln AMD)	409,339.7	464,897.1	527,657.7
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ (մլն. դրամ) Loans and advances to customers (mln AMD)	259,413.5	291,399.1	342,101.5
Ներդրումային արժեթղթեր (մլն. դրամ) Investment securities (mln AMD)	47,378.9	60,205.7	77,007.3
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ (մլն. դրամ) Liabilities to customers (mln AMD)	156,197.6	183,942.3	191,353.0
Կանոնադրական կապիտալ (մլն. դրամ) Charter capital (mln AMD)	26,652.1	28,132.2	31,578.0
Ընդամենը սեփական կապիտալ (մլն. դրամ) Total own capital (mln AMD)	49,110.3	60,465.7	77,270.1
Զուտ շահույթ (մլն. դրամ) Net profit (mln AMD)	7,111.8	4,740.1	9,004.3



Սարիբեկ Սուքիասյան / Saribek Sukiasyan
Խորհրդի նախագահ / Chairman of the Board

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՅԻ ՈՒՂԵՐՁԸ

Հարգելի տիկնայք և պարոնայք
Հայէկոնոմբանկի խորհրդի անունից ցանկանում եմ շնորհակալություն հայտնել բոլորիդ՝ Բանկի նկատմամբ ձեր ցուցաբերած վստահության և հավատարմության համար:

Ներկայացնելով Բանկի 2024թ. տարեկան հաշվետվությունը՝ պետք է նշեմ, որ տարին, չնայած աշխարհաքաղաքական իրավիճակներով պայմանավորված նոր մարտահրավերներին, շուկայում օրեցօր սրվող մրցակցությանը, Հայէկոնոմբանկի համար հաջողված էր: Այսօր գոհունակությամբ կարող ենք արձանագրել, որ հաշվետու տարին Հայէկոնոմբանկի համար ձեռքբերումների և աճի հերթական փուլ էր, ինչը հնարավոր դարձավ Բանկի ռազմավարական ծրագրի հետևողական իրականացման, կորպորատիվ կառավարման, ներքին հսկողության և ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգերի կիրառման արդյունքում:

Շարունակական ջանքերը, ուղղված անկանխիկ գործարքների խթանմանը և հաճախորդներին թվայնացված ծառայություններով առավելագույնս ապահովելուն, հաճախորդների սպասարկումը դարձրել են անհամեմատ ավելի հարմարավետ և արագ: Բանկի որդեգրած ռազմավարության արդյունքում ներդրվել են բանկային նոր պրոդուկտներ և ծառայություններ, կատարելագործվել առկա ծառայությունները, ընդլայնվել հաճախորդների և գործընկերների հետ փոխշահավետ համագործակցության շրջանակները՝ պարարտ հող ստեղծելով Բանկի հիմնական ցուցանիշների աճի համար:

Հատուկ գնահատանքի է արժանի անձնակազմի պրոֆեսիոնալ և նվիրված աշխատանքը, ինչը հանդիսանում է Բանկի հաջողության կարևորագույն տարր:

Հաշվետու տարում Բանկը շարունակեց փոխշահավետ համագործակցությունը միջազգային ֆինանսավարկային կառույցների և արտերկրի խոշորագույն առևտրային բանկերի ու ֆինանսական կազմակերպությունների հետ: Մասնավորապես, էլ ավելի խորացվեց համագործակցությունը Բանկի ավանդական գործընկերների՝ Վերակառուցման և

Զարգացման Եվրոպական Բանկի, Գերմանահայկական հիմնադրամի, Սևծովյան Առևտրի և Զարգացման Բանկի, Ասիական Զարգացման Բանկի, Հոլանդական Զարգացման Բանկի և այլ հեղինակավոր կառույցների հետ: Սա, իհարկե, խոսում է միջազգային շուկայում Հայէկոնոմբանկի նկատմամբ գործընկերների շարունակական վստահության մասին:

Սովորական բաժնետոմսերի տեղաբաշխումների արդյունքում Բանկի կապիտալը 2024թ. ավելացավ ավելի քան 8.9 մլրդ ՀՀ դրամով, իսկ բաժնետերերի ընդհանուր քանակը հավասարվեց գրեթե 7,500-ի, ինչը բանկային համակարգի համար բացառիկ ցուցանիշ է:

Առավելագույնս առաջնորդվելով Բանկի հետագա զարգացման և բաժնետերերի շահերով՝ 2024թ.-ին Բանկի բաժնետերերին ավանդաբար վճարվեցին շահաբաժիններ նախորդ տարվա արդյունքներով:

Ամփոփելով հաշվետու տարին՝ վստահեցնում եմ, որ, չնայած ներկայիս աշխարհաքաղաքական

MESSAGE BY THE CHAIRMAN OF THE BOARD

Ladies and Gentlemen,

Let me thank you all on behalf of the Board of Armeconombank for your trust and loyalty towards the Bank.

As I present the 2024 Annual Report of the Bank, I must note that despite the new challenges brought by geopolitical developments and increasing competition in the market the year was successful for Armeconombank. Today we can state with satisfaction that the reporting year was a period of achievements and growth due to consistent implementation of the strategic plans of the Bank and the efficiency of our corporate governance, internal control and risk management systems.

The consistent efforts to promote cashless transactions and provide the customers with digital services at the most made the customer service much more comfortable and fast. As a result of the strategy adopted by the Bank, new banking products and services were introduced, the existing services were improved, and the scope of mutually beneficial cooperation with our customers and partners expanded, all of which created good prerequisites for significant increase in key performance indicators of the Bank.

The professional and devoted work of the personnel, an essential element for the Bank's success, deserves special recognition.

Over the reporting year, the Bank continued the mutually beneficial cooperation with international finance and credit institutions, major foreign commercial banks and financial institutions. In particular, the Bank worked with its traditional partners such as the European Bank for Reconstruction and Development, German-Armenian Fund, Black Sea Trade and Development Bank, Asian Development Bank, Dutch Development Bank, and other reputable institutions. This of course is a proof of the continuous trust of partners towards Armeconombank in the international market.

In 2024, the Bank performed placement of common shares, which increased the Bank's capital by more than AMD 8.9bn while the total number of shareholders reached nearly 7,500, an exclusive indicator for our banking sector.

To serve the further development of the Bank and shareholders' interests to the maximum extent, in 2024 the Bank's shareholders were traditionally paid dividends based on the results for the previous year.

As we conclude the reporting year, I assure you that despite the new challenges of the current geopolitical situation we will continue to implement the Bank's strategic plan to ensure sustainable development and progress. No doubt, the transparent business style and customer-focused approach will make Armeconombank more attractive to the general public.

I would like to add that the Bank, conscious of its social responsibility to the society and the State, will also keep implementing its traditional charitable projects.

As I thank our shareholders, partners and customers for their cooperation, I assure you that Armeconombank will use its full potential to continue its productive

իրավիճակներով պայմանավորված նոր մարտահրավերներին, շարունակելու ենք անշեղորեն իրականացնել Բանկի ռազմավարական ծրագիրը՝ ապահովելով կայուն զարգացումն ու առաջընթացը: Անկասկած, Բանկի թափանցիկ գործելաոճը և հաճախորդակենտրոն մոտեցումը Հայէկոնոմբանկն է՝ ավելի գրավիչ կդարձնեն հասարակության լայն շերտերի համար:

Ավելացնենք նաև, որ Բանկը, գիտակցելով հասարակության և պետության առջև իր սոցիալական պատասխանատվությունը, շարունակելու է նաև իր ավանդական բարեգործական ծրագրերը:

Շնորհակալություն հայտնելով բաժնետերերին, գործընկերներին և հաճախորդներին համագործակցության համար՝ հավաստում ենք, որ Բանկը կգործադրի իր ողջ ներուժը՝ ֆինանսական շուկայում իր արդյունավետ գործունեությունը շարունակելու և ցուցանիշների կայուն աճ ապահովելու համար:

Ս. Սուքիասյան



performance in the banking market and ensure a stable growth of its indicators.

S. Sukiasyan



ԽՈՐՀՐԴԻ ԱՆՂԱՄՆԵՐ



Արամ Խաչատրյան
Խորհրդի նախագահի տեղակալ
Aram Khachatryan
Deputy Chairman of the Board



Ռուբեն Հայրապետյան
Խորհրդի անդամ
Ruben Hayrapetyan
Member of the Board



Պեր Ֆիշեր
Խորհրդի անդամ
Per Fischer
Member of the Board

MEMBERS OF THE BOARD



Լուիզա Պետրոսյան
Խորհրդի անդամ, քարտուղար
Luiza Petrosyan
Member of the Board, Secretary



Հրանտ Սուվարյան
Խորհրդի անդամ
Hrant Suvaryan
Member of the Board



Արամ Մելիքյան
Խորհրդի անդամ,
Փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի ներկայացուցիչ
Aram Melikyan
Member of the Board,
Representative of Shareholders with Minor Participation



Արտակ Առաքելյան / Artak Arakelyan
Վարչության նախագահ / Chairman of the Executive Board

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՒՂԵՐՁԸ

MESSAGE BY THE CHAIRMAN OF THE EXECUTIVE BOARD

Հարգելի՛ բաժնետերեր, հաճախորդներ և գործընկերներ,

Ողջունում եմ Ձեզ Հայէկոնոմբանկի վարչության անունից և Ձեր ուշադրությանն եմ ներկայացնում Բանկի հաշվետու՝ 2024թ. արդյունքները:

Հաշվետու տարին, չնայած առկա դժվարություններին և տնտեսական բազում մարտահրավերներին, առաջընթացի և նվաճումների հերթական տարի էր Հայէկոնոմբանկի համար: Տարին նշանավորվեց մի շարք կարևոր արդյունքներով և ձեռքբերումներով: Բանկի ղեկավարության ու ամբողջ անձնակազմի նվիրված աշխատանքի արդյունքում ապահովեցինք ծրագրված ռազմավարական նպատակների իրականացումը՝ ինչպես ծավալային, այնպես էլ որակական առումով: Բանկի զարգացման ռազմավարության հետևողական իրականացումը դրսևորվեց ինչպես գործունեության հիմնական ցուցանիշների կայուն, շարունակական աճով, այնպես էլ միջազգային համագործակցության զգալի ընդլայնմամբ, նորագույն թվային բանկային տեխնոլոգիաների ներդրմամբ և զարգացմամբ, բանկի ծառայությունների ծավալների և տեսականու ավելացմամբ:

Հաշվետու տարին հաջողված էր բանկի համար թե՛ եկամտաբեր ակտիվների ավելացման, թե՛ ռեսուրսների ներգրավման, թե՛ կապիտալի աճի առումով:

Բանկի գործունեության կարևորագույն գնահատականը՝ ձևավորված շահույթը կազմել է 9,004.3 մլն դրամ՝ աճելով նախորդ տարվա համեմատ 90.0%-ով՝ որը կնպաստի բանկի առաջիկա զարգացմանը և մշակված առաջխաղացման ծրագրերի արդյունավետ իրականացմանը:

Հաշվետու տարում Բանկի ակտիվներն աճել են 13.5%-ով՝ կազմելով 527.7 մլրդ դրամ, հաճախորդների տրված վարկերը և փոխառությունները՝ 17.4%-ով՝ կազմելով 342.1 մլրդ դրամ, ներդրումային արժեթղթերը՝ 27.9%-ով՝ կազմելով 77.0 մլրդ դրամ, պարտավորությունները՝ 11.4%-ով՝ կազմելով 450.4 մլրդ դրամ, հաճախորդների նկատմամբ պարտավորությունները՝ 4.0%-ով կամ 7.4 մլրդ դրամով՝ կազմելով 191.4 մլրդ դրամ, որի հիմքում ընկած է բանկի, հաճախորդների և գործընկերների միջև փոխվստահության և փոխշահավետության առողջ հենքի վրա ձևավորված երկարատև կայուն համագործակցությունը: Բանկի ընդհանուր կապիտալն աճել է 27.8%-ով՝ հիմնականում արտաքին աղբյուրի՝ սովորական բաժնետոմսերի թողարկման և տեղաբաշխման արդյունքում կանոնադրական կապիտալի ավելացման, և ներքին աղբյուրի՝ ձևավորված շահույթի հաշվին՝ կազմելով 77.3 մլրդ դրամ:

Միջազգային ֆինանսական շուկայում Բանկը շարունակում է ընդլայնել համագործակցության շրջանակները գործընկեր ֆինանսական կազմակերպությունների հետ՝ ներառելով բանկային ծառայությունների նորանմուծությունների բնագավառում միջազգային փորձի ուսումնասիրումը և տեղական շուկայում համապատասխան պրոդուկտների ադապտացված տարբերակների ներդրումը, սեմինարների և վերապատրաստման ծրագրերի միջոցով աշխատակիցների արհեստավարժության մակարդակի բարձրացումը և մասնագիտական հմտությունների կատարելագործումը, ֆինանսավորման տարբեր ծրագրերի միջոցով ՀՀ կազմակերպություններին արդիական և շահավետ պայմաններով վարկային պրոդուկտների առաջարկը և այլն:

Dear Shareholders, Customers and Partners,

Let me welcome you on behalf of the Executive Board of Armeconombank and present the account on the Bank's performance for the year of 2024.

The reporting year, despite the instable geopolitical situation, existing hardships, and many economic challenges, was another year of progress and achievements for Armeconombank. The year was marked by a number of significant results and accomplishments. Thanks to the dedicated work of the Bank's management and the entire staff we were able to achieve the planned strategic goals both quantitatively and qualitatively. The consistent implementation of the Bank's development strategy resulted in steady, continuous growth of the key performance indicators, significant expansion of international cooperation, introduction and improvement of the latest digital banking technologies, and increase in the number and range of our services.

The reporting year was successful for the Bank in terms of the growth of its earning assets, increased attraction of resources, and supplementation of the capital.

The key indicator of the bank's performance — the generated profit — amounted to AMD 9,004.3m, showing a 90.0% increase compared to the previous year, which will contribute to the bank's upcoming development and the effective implementation of the designed advancement programs.

In the reporting year, the assets of the Bank increased by 13.5% and reached AMD 527.7bn, the loans and advances to customers increased by 17.4% and reached AMD 342.1bn, investment securities by 27.9% amounting to AMD 77.0bn, the liabilities by 11.4% amounting to AMD 450.4bn, and the liabilities to customers increased by 4.0% or AMD 7.4bn and reached AMD 191.4bn — this reflects the long-term, stable cooperation of the Bank with its customers and partners, which is based on mutual trust and common benefit. The total capital of the Bank increased by 27.8% — mainly on the account of an external source, i.e. issue and placement of common shares, and the internal source, i.e. the generated profit — and reached AMD 77.3bn.

In the international finance market, the Bank keeps expanding the cooperation with partner financial institutions, which includes study of the international practices in banking service innovations, introduction of adapted versions of suitable products in the local market, improvement of personnel proficiency through seminars and trainings, offer of loan products to Armenian organizations on up-to-date and favorable terms, etc. Let me mention that in 2024 the Bank signed loan agreements worth USD 45.25m, and USD 20.75m equivalent in AMD, and the resources so attracted will be utilized to finance and develop micro, small, and medium-sized businesses, Green projects, energy-efficiency programs, female and young entrepreneurs, as well as the agricultural sector.

Նշեն, որ 2024թ. բանկը միջազգային ֆինանսավարկային կառույցների հետ կնքել է 45.25 մլն ԱՄՆ դոլարի և 20.75 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի վարկային պայմանագրեր, որոնցով ներգրավված ռեսուրսներն ուղղվելու են միկրո, փոքր և միջին բիզնեսի, Կանաչ նախագծերի, էներգաարդյունավետության ծրագրերի, կին և երիտասարդ ձեռներեցների, ինչպես նաև գյուղատնտեսության ոլորտի վարկավորմանը և զարգացմանը:

Բանկի նվաճումների, ձեռքբերումների և բարի համբավի հիմքում դրված են հաճախորդների սպասարկման ոլորտում նորագույն արդիական թվային տեխնոլոգիաների կիրառումը, հաճախորդների սպասարկման որակի շարունակական բարձրացումը, մատուցվող ծառայությունների ցանկի ընդլայնումը և նորամուծությունների կիրառումը:

Հաշվետու տարում բանկում ներդրվեցին մի շարք նորամուծություններ, որոնցից ցանկանում են առանձնացնել հետևյալները. Բանկը ներդրեց «AEB Mobile» համակարգում բիոմետրիկ նույնականացման ծրագիրը, «Tap to Phone» տեխնոլոգիայով աշխատող SoftPos տերմինալներով վճարումների ընդունման հնարավորությունը, սկսեց փոխանցումներ իրականացնել «Mastercard» վճարային համակարգի «MoneySend» փոխանցման համակարգով, գործարկեց «VSPS» («VISA Stop Payment Service») ծառայությունը, որը հաճախորդին հնարավորություն է տալիս «AEB Mobile» համակարգում տեսնել քարտի կցագրված լինելը այլ հավելվածների/կայքերին և ցանկության դեպքում ապակցել քարտը, մշակեց հաճախորդի հետ հաղորդակցման միջոցների հեռախոս, էլ. փոստ, վերիֆիկացիայի համակարգը, «AEB Mobile» համակարգի միջոցով «Visa Guru Travel» քարտերին, աշխատավարձային քարտերին սկսեց տրամադրել օնլայն վարկային գծեր, միացավ «Ubpay» վճարահաշվարկային համակարգին:

Ընդլայնվեցին ինքնասպասարկման տերմինալներով մատուցվող ծառայությունների ցանկը: Բանկը ներդրեց նաև մի շարք ծրագրային համակարգեր հաճախորդների և հեռահար, և՛ տեղում սպասարկման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Բանկի հաջողությունների գրավականներից մեկն էլ լայն տարածքային ցանցի առկայությունն է: Հաշվետու տարում գործող մասնաճյուղերում իրականացվեցին տեխնիկական վերազինման և վերանորոգման աշխատանքներ, որը նպատակ ունի բարձրացնել թե՛ հաճախորդների սպասարկման, թե՛ ներքին աշխատանքների կազմակերպման մակարդակը:

Հարկ են համարում նաև նշել, որ Բանկի հաջողություններն անհնար կլինեին առանց համախընդրված, վճռական և բարձրակարգ որակավորմամբ աշխատանքային թիմի, առանց նրա մասնագիտական հմտությունների և աշխատանքային պատասխանատվության:

Վստահության և աջակցության համար շնորհակալություն հայտնելով մեր հաճախորդներին, բաժնետերերին և գործընկերներին՝ հավաստիացնում են, որ Հայէկոնոմբանկը առաջիկայում ևս կշարունակի իր ակտիվ գործունեությունը բանկային համակարգում՝ որպես կայուն, վստահելի և կանխատեսելի ֆինանսական կառույց:

The Bank's progress, achievements, and reputation are based on the latest digital technologies and continuous improvement of customer service, expansion of the range of services provided and introduction of innovations.

Among the innovations introduced during the reporting year, I would like to point out the biometric identification program in AEB Mobile system, the feature of accepting payments via SoftPos terminals working by "Tap to Phone" technology, transfers via MoneySend transfer system of Mastercard clearing system, VSPS (VISA Stop Payment Service) which enables the customer to view whether a card is linked to any other applications/websites in AEB Mobile system and unlink it if necessary, a verification system of means of communication with the customer (phone, e-mail), online credit lines to Visa Guru Travel, salary cards via AEB Mobile system and the joining to Ubpay clearing system.

The range of the services provided through self-service terminals further expanded. The bank also launched a number of software systems to increase the efficiency of both remote and on-site customer service.

One of the guarantees of the Bank's success is its wide territorial network. In the reporting year the existing branches underwent technical refurbishment and repairs to improve both customer service and internal operations.

I must also state that the Bank's achievements would have been impossible without our united, determined, and highly qualified team, its professional skills and work responsibility.

As I thank our shareholders, partners, and customers for their trust and support, I assure you that Armeconombank will continue to be active in the banking system as a reliable, stable, and predictable financial institution.

A. Arakelyan



Ա. Առաքելյան



ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

MEMBERS OF THE EXECUTIVE BOARD




Ռուբեն Բադալյան
Վարչության նախագահի տեղակալ
Գործադիր տնօրենի՝ գործառնական գծով
տեղակալ
Ruben Badalyan
Deputy Chairman of the Executive Board
Deputy CEO for Operations



Օնիկ Չիչյան
Վարչության նախագահի տեղակալ
Գործադիր տնօրենի՝ կորպորատիվ և
մանրածախ բիզնեսի գծով տեղակալ
Onik Chichyan
Deputy Chairman of the Executive
Board
Deputy CEO for Corporate and Retail
Business



Աստղիկ Մանրիկյան
Վարչության նախագահի տեղակալ
Գործադիր տնօրենի՝ միջազգային
և զարգացման գծով տեղակալ
Astghik Manrikyan
Deputy Chairman of the Executive
Board
Deputy CEO for International
Operations and Development



Արփինե Փիլոսյան
Վարչության նախագահի տեղակալ
Գործադիր տնօրենի՝ տեխնոլոգիաների
գծով տեղակալ
Arpine Pilosyan
Deputy Chairman of the Executive Board
Deputy CEO for Technologies



Արտաշես Հարությունյան
Վարչության նախագահի տեղակալ
Գործադիր տնօրենի՝ ֆինանսական գծով
տեղակալ
Artashes Harutyunyan
Deputy Chairman of the Executive Board
Deputy CEO for Finance



Նոնա Գալստյան
Վարչության անդամ
Հաշվապահական հաշվառման
վարչության պետ, գլխավոր հաշվապահ
Nona Galstyan
Member of the Executive Board
Chief Accountant
Head of Accounting Department



Վրեժ Զհանգիրյան
Վարչության անդամ
Իրավաբանական վարչության պետ
Vrezh Jhangiryan
Member of the Executive Board
Head of Legal Department



Հայկ Ավետիսյան
Վարչության անդամ
Ռազմավարության և մեթոդաբանության
վարչության պետ
Hayk Avetisyan
Member of the Executive Board
Head of Strategy and Methodology
Department



Հակոբ Մաթևոսյան
Վարչության անդամ
Ռիսկերի կառավարման վարչության պետ
Hakob Matevosyan
Member of the Executive Board
Head of the Risk Management Department





ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

TIMELINE

1991

Գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկում՝ որպես Բաց Բաժնետիրական Ընկերություն (Գրանցում թիվ 1):

1997

Դարձել է ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության պետական պարտքի կառավարման գործակալ:

Արտոնագրվել է ՀՀ-ում Համաշխարհային Բանկի կողմից իրականացվող փոքր և միջին բիզնեսի զարգացման ֆինանսավորման ծրագրին:

2000

Հիմնադրել է «Էկոնոմիկասացիա» դուստր ընկերությունը:

Մասնակցել է ՀՀ-ում պլաստիկ քարտերով միասնական վճարային համակարգի ձևավորման նպատակով ստեղծվող «Արմենիան քարդ» ՓԲԸ-ի հիմնադրմանը:

Առաջինը ՀՀ բանկային համակարգում, առանց պետական երաշխավորության, պայմանագիր է կնքել Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) հետ, 1 մլն. ԱՄՆ դոլարի սահմաններում վարկային ծրագիր իրականացնելու նպատակով:

Մասնակցել է «Սիլ Ինշուրանս» ապահովագրական ընկերության հիմնադրմանը:

2000թ. արդյունքներով ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության համատեղ հանձնաժողովի որոշմամբ, ճանաչվել է ներքին պետական պարտքի կառավարման ՀՀ Կառավարության լավագույն գործակալ:

2001

2001թ. արդյունքներով ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության համատեղ հանձնաժողովի որոշմամբ, ճանաչվել է ներքին պետական պարտքի կառավարման ՀՀ Կառավարության լավագույն գործակալ:

2001թ. արդյունքներով AMEX-ի (American Express Bank Ltd., New York) կողմից ճանաչվել է ՀՀ լավագույն սպասարկող բանկ և ստացել է որակի սերտիֆիկատ:

Կանոնադրական հիմնադրամը համալրվել է 100 մլն. դրամով:

2002

Կանոնադրական հիմնադրամը համալրվել է 300 մլն. դրամով:

ՎԶԵԲ-ի Առևտրի խթանման ծրագրի շրջանակներում ստացել է 500 հազ. ԱՄՆ դոլարի երաշխիքային վարկ:

2002թ. արդյունքներով AMEX-ի (American Express Bank Ltd., New York) կողմից ճանաչվել է ՀՀ լավագույն սպասարկող բանկ և ստացել է որակի սերտիֆիկատ:

2002թ. արդյունքներով ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության համատեղ հանձնաժողովի որոշմամբ, ճանաչվել է ներքին պետական պարտքի կառավարման ՀՀ Կառավարության լավագույն գործակալ:

1991

Registered with the Central Bank of Armenia as a joint-stock company (Record # 1).

1997

Became the best public debt management agent for the Armenian Ministry of Finance and Economy.

Was licensed to participate in World Bank's financing project for small and medium business development in Armenia.

2000

Incorporated Econominkasatsia cash collection subsidiary company.

Participated in the establishment of Armenian Card CJSC created to develop a unified plastic card payment system in Armenia.

The first in the Armenian banking sector, signed an agreement with the European Bank for Reconstruction and Development (EBRD) to carry out a loan project for USD 1m.

Participated in the establishment of SIL Insurance, an insurance company.

For 2000 performance results, was declared the best public debt management agent for the Government upon a decision of the joint committee of CB and Ministry of Economy and Finance of RA.

2001

For 2001 performance results, was declared the best domestic debt management agent for the Government upon a joint decision by CB and Ministry of Economy and Finance of RA.

Was recognized the best servicing Armenian bank in 2001 by AMEX (American Express Bank Ltd., New York) and received Quality Performance Certificate.

The charter capital was supplemented with AMD 100m.

2002

The charter capital was supplemented with AMD 300m.

Received a guarantee facility amounting to USD 500,000 within the framework of Trade Promotion Program of EBRD.

Was recognized the best servicing Armenian bank in 2002 by AMEX (American Express Bank Ltd., New York) and received Quality Performance Certificate.

For 2002 performance results, was declared the best agent for domestic debt management for the Government of Armenia by the decision of the joint committee of CB of Armenia and The Ministry of Finance and Economy of RA.

2003

The charter capital was supplemented with AMD 200m.

In association with EBRD, a new instrument for foreign trade facilitation through LCs was implemented.

2003

Կանոնադրական հիմնադրամը համալրվել է 200 մլն. դրամով:

ՎՋԵԲ համագործակցությամբ ներդրվել է արտաքին առևտրի խթանմանն ուղղված ակտիվիզացիային ֆինանսավորման նոր գործիք:

2004

Բանկի և ԳՀՀ-ի միջև կնքվեց վարկային երաշխիքի պայմանագիր, որով բանկին հնարավորություն ընձեռնվեց ներգրավել վարկային միջոցներ միջազգային առևտրային բանկերից, որի դիմաց որպես ապահովման միջոց ԳՀՀ-ն թողարկեց մինչև 2.0 մլն. ԱՄՆ դոլարի երաշխիքներ:

Բանկի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ) միջև կնքվեց վարկային պայմանագիր, որի համաձայն բանկին հատկացվեց 2.0 մլն. ԱՄՆ դոլարի վարկ:

Բանկի ու ՎՋԵԲ-ի միջև կնքվեց պայմանագիր, որով սկսվեց բանկի կանոնադրական կապիտալում ՎՋԵԲ-ի մասնակցության գործընթացը, որի արդյունքում ՎՋԵԲ-ի մասնակցությունը բանկի կանոնադրական կապիտալում կկազմի 25%+1 բաժնետոմս:

Գործարկվել են «ԿԵՆՏՐՈՆ», «ԷՐԵԲՈՒՆԻ-1» և «ԱՐԱՐԱՏ» մասնաճյուղերը:

2005

Կանոնադրական հիմնադրամը համալրվել է 633.3 մլն. դրամով, որի արդյունքում ՎՋԵԲ մասնակցությունը բանկի կանոնադրական կապիտալում կազմեց 25%+1 բաժնետոմս:

Բանկի ու ՎՋԵԲ-ի միջև կնքվեց պայմանագիր, որի համաձայն բանկին տրամադրվեց 2.0 մլն. ԱՄՆ դոլարի վարկ:

ՎՋԵԲ փայամասնակցության շրջանակներում մատուցվող 500.0 հազ. Եվրո տեխնիկական օժանդակության ցուցաբերման մրցույթում հաղթած «Lloyds TSB» բանկը հունիսից գործունեություն է ծավալել՝ համաձայն հաստատված «Ինստիտուցիոնալ կառուցման պլանի»:

Բանկի և Կոմերցբանկի միջև կնքվեց պայմանագիր, որի համաձայն բանկին հատկացվեց 2.0 մլն. ԱՄՆ դոլարի վարկ:

Բանկի և ՎՋԵԲ-ի միջև կնքվեց համաֆինանսավորման պայմանագիր, որի համաձայն բանկին հատկացվեց 3.0 մլն. ԱՄՆ դոլարի վարկային գիծ:

Բանկի «Արմինֆո» տեղեկատվական գործակալության կողմից արժանացել է ՀՀ առևտրային բանկերի մեջ հիփոթեքային վարկավորում իրականացնող, պլաստիկ քարտերի շուկայում և միջբանկային արտարժույթային շուկայում ակտիվ գործունեություն իրականացնող լավագույն բանկ նոմինացիային:

2005թ. արդյունքներով ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության համատեղ հանձնաժողովի որոշմամբ, ճանաչվել է ներքին պետական պարտքի կառավարման ՀՀ Կառավարության լավագույն գործակալ:

Գործարկվել է «ՆԱԻՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» մասնաճյուղը:

2006

Երևանում մարտ ամսին բանկի և ՎՋԵԲ-ի կողմից համատեղ կազմակերպվեց և անցկացվեց Առևտրի ֆինանսավորման միջազգային բանկային կոնֆերանսը:

2004

Signed a loan guarantee agreement with GAF, which enabled the Bank to attract loan facilities from international commercial banks covered by guarantees issued by GAF for up to USD 2.0m.

Signed a loan agreement with International Finance Corporation (IFC), under which the Bank received a loan of USD 2.0m.

Signed an agreement with EBRD, by which the process of EBRD's participation in the charter capital of the Bank started to result in shareholding of 25%+1share.

Opened KENTRON, EREBUNI-1 and ARARAT branches.

2005

The charter capital was supplemented by AMD 633.3m as a result of which EBRD participation in the Bank's charter capital made 25%+1 share.

An agreement has been signed between the Bank and EBRD according to which USD 2.0m loan has been granted to the Bank.

Lloyds TSB Bank, the winner of the EUR 500,000-worth tender for technical assistance announced in connection with EBRD's equity participation, started working in line with the approved Institutional Building Plan.

Signed an agreement with Commerzbank for allocating USD 2.0m to the Bank.

A co-financing agreement was signed between the Bank and EBRD for allocating credit line of USD 3.0m to the Bank.

Won in the nomination of the Best Bank among all RA commercial banks in mortgage loans, plastic cards, and interbank foreign currency market by Arminfo news agency.

For 2005 performance results, was declared the best agent for domestic public debt management for the Government of Armenia by the decision of the joint committee of CB of Armenia and The Ministry of Finance and Economy of RA.

Opened NAIRI MEDICAL CENTER Branch.

2006

International Banking Conference on Trade Finance was organized and held jointly by the Bank and EBRD in Yerevan in March.

In May, an Agreement on Trade Facilitation and Issuance of Guarantees with has been signed between the Bank and IFC.

In December, signed a loan agreement with EBRD, under which USD 2.0m was extended to the Bank exceptionally for mortgage lending. This is EBRD's first mortgage lending project in the Republic of Armenia.

For 2006 performance results, by a joint resolution of the joint committee of the Central Bank of Armenia and the Ministry of Finance and Economy of RA, was recognized the best agent of the RA government for internal public debt management.

The Bank was granted a Certificate of the Best Servicing Partner by City Group.

Opened AJAPNYAK, NORK-MARASH, and ROSSIA branches.

Մայիսին բանկի և ՄՖԿ-ի միջև կնքվեց «Առևտրի խթանման և երաշխիքների տրամադրման» պայմանագիր:

Դեկտեմբերին ՎՋԵԲ-ի և բանկի միջև կնքվեց վարկային պայմանագիր, որի համաձայն բանկին հատկացվեց 2.0 մլն. ԱՄՆ դոլար գումարի վարկ, որն ուղղվել է բացառապես հիփոթեքային վարկավորմանը: Սա ՎՋԵԲ-ի Հայաստանի Հանրապետությանում իրականացվող առաջին հիփոթեքային ծրագիրն է:

2006թ. արդյունքներով ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության համատեղ հանձնաժողովի որոշմամբ ճանաչվել է ներքին պետական պարտքի կառավարման ՀՀ կառավարության լավագույն գործակալ:

Բանկն արժանացավ «City Group»-ի լավագույն սպասարկող գործընկերոջ սերտիֆիկատին:

Գործարկվել են «ԱԶԱՓԵՅԱԿ», «ՆՈՐԲ-ՄԱՐԱՇ» և «ՈՒՍԻԱ» մասնաճյուղերը:

2007

Փետրվարին Moody's Investors Service միջազգային վարկանիշային ընկերությունը ՀՀ բանկային համակարգում առաջին անգամ բանկին շնորհեց ֆինանսական կայունության E+ և ՀՀ դրամով ու արտարժույթով երկարաժամկետ ավանդների B1 վարկանիշներ, երկուսն էլ Stable Outlook-ով (կայուն հեռանկար):

Ապրիլին վերանայելով շնորհված վարկանիշները՝ Moody's Investors Service միջազգային վարկանիշային ընկերությունը բանկին արժանացրել է ավելի բարձր՝ ֆինանսական կայունության D- և ՀՀ դրամով և արտարժույթով երկարաժամկետ ավանդների Ba3 վարկանիշների, երկուսն էլ Stable Outlook-ով (կայուն հեռանկար):

Փետրվարին բանկի և ՄՖԿ-ի միջև կնքվեց վարկային պայմանագիր, որի համաձայն բանկին հատկացվեց 2.0 մլն. ԱՄՆ դոլարի վարկ, որն ուղղվել է փոքր և միջին բիզնեսի և հիփոթեքային վարկավորմանը:

Հունիսին հայկական բանկերից առաջինը բանկն արժանացավ գերմանական Commerzbank AG բանկի Միջազգային արտարժույթային փոխանցումների որակի սերտիֆիկատին՝ միջազգային փոխանցումների արագ և որակյալ կատարման համար:

Հուլիսին բանկի և ԳՀՀ-ի միջև կնքվեց վարկային պայմանագիր, որի համաձայն բանկը 2007թ. տրամադրեց 103.5 մլն. ՀՀ դրամի հիփոթեքային վարկեր:

Հոկտեմբերին բանկի և ՎՋԵԲ-ի միջև կնքվեց վարկային պայմանագիր, որի համաձայն բանկին հատկացվեց 3.0 մլն. ԱՄՆ դոլարի վարկ, որն ուղղվել է միկրո և փոքր բիզնեսի վարկավորմանը:

Դեկտեմբերին բանկի և ՎՋԵԲ-ի միջև կնքվեց սինդիկացված վարկի պայմանագիր, որի համաձայն ՀՀ բանկային համակարգի պատմության մեջ առաջին անգամ համաշխարհային ճանաչում ունեցող վեց ֆինանսական հաստատություններ՝ ՎՋԵԲ-ը, գերմանական Commerzbank AG, ավստրիական Raiffeisen Zentralbank Österreich AG և Bank Austria Creditanstalt AG, հնդկական State Bank of India, թայվանյան Land Bank of Taiwan, անգլիական FBN Bank (UK) Limited բանկերը բանկին տրամադրեցին 15.0 մլն. ԱՄՆ դոլարի սինդիկացված վարկ, որն ուղղվել է փոքր և միջին բիզնեսի վարկավորմանը:

2007

In February, for the first time in the Armenian banking sector, Moody's Investors Service, an international rating agency, granted the Bank E+ financial stability and B1 long- term local currency and foreign currency deposit ratings, both with Stable Outlook.

In April, the agency revised its ratings and assigned the Bank D- financial strength and Ba3 long-term local currency and foreign currency deposit ratings, both with Stable Outlook again.

In February, signed an Agreement with IFC for USD 2.0m to be used for financing of small and medium businesses and mortgage lending.

In June, became the first bank in Armenia to receive a Certificate of Quality of International Currency Transfers by Commerzbank AG for offering fast and high quality international transfers.

In July, signed an agreement with GAF to extend mortgage loans in the amount of AMD 103.5m in 2007.

In October, the Bank signed a loan agreement for USD 3.0m with EBRD for lending to micro and small enterprises.

In December, the Bank signed a syndicated loan agreement with EBRD in the amount of USD 15.0m, a project in which, for the first time in the history of the Armenian banking sector, six internationally recognized financial institutions such as EBRD, German Commerzbank AG, Austrian Raiffeisen and Zentralbank Österreich AG and Bank Austria Creditanstalt AG, Indian State Bank of India, Land Bank of Taiwan, FBN Bank (UK) Limited were involved. The loan was to be used for financing of small and medium-sized enterprises.

Joined MoneyGram clearance system. Opened IJEVAN Branch.

2008

In February, a USD 5.0m loan agreement was signed between the Bank and the Black Sea Trade and Development Bank to finance small and medium business.

A specialized micro-lending center was opened.

The Bank was recognized by the EBRD as the most active issuing bank of the year among such engaged in documentary operations under EBRD's Trade Facilitation Project in Armenia.

Opened ZEYTUN Branch.

2009

In January, IFC granted the Bank a credit line of USD 5m under Trade Facilitation Project.

The Bank became a member of NASDAQ OMX ARMENIA OJSC and the only bank to have its shares listed in Platform B of NASDAQ OMX ARMENIA OJSC.

In November, in addition to the Co-financing Agreement signed with EBRD on 15.12.2005, another USD 2m was added to the existing facilities of USD 5m, thus bringing the total amount of the project to USD 7m.

MoneyGram granted the Bank a certificate based on 2009 results and recognized the Bank as the best bank in the area of customer service of 2009.

Joined Ria Money Transfers clearing system.

Opened SHIRAK Branch.

Միացել է «MoneyGram» վճարային համակարգին:
Գործարկվել է «ԻՋԵՎԱՆ» մասնաճյուղը:

2008

Փետրվարին բանկի և Սևծովյան Առևտրի և շարժացման Բանկի միջև կնքվեց վարկային պայմանագիր, որի համաձայն բանկին հատկացվեց 5.0 մլն. ԱՄՆ դոլարի վարկ, որն ուղղվեց փոքր և միջին բիզնեսի վարկավորմանը:

Բացվեց միկրովարկավորման մասնագիտացված կենտրոն:

Բանկը ՎՋԵԲ-ի կողմից ճանաչվեց ՎՋԵԲ-ի Առևտրի խթանման ծրագրի շրջանակներում փաստաթղթային գործառնություններ իրականացնող տարվա ամենաակտիվ թողարկող բանկը Հայաստանի Հանրապետությունում:

Գործարկվել է «ՋԵՅՈՒՆ» մասնաճյուղը:

2009

Հունվարին «Առևտրի խթանման ծրագրի» շրջանակներում Միջազգային Ֆինանսական Կորպորացիան բանկին տրամադրեց 5.0 մլն. ԱՄՆ դոլարի վարկային գիծ:

Բանկը դարձավ «ՆԱՍՐԱԲ ՕԵՄԵՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի անդամ և «ՀԱՅԵԿՈՆՈՍԲԱՆԿ» ԲԲԸ-ն միակ բանկն է, որի բաժնետոմսերը ցուցակված են «ՆԱՍՐԱԲ ՕԵՄԵՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի «B» հարթակում:

Նոյեմբերին բանկի և ՎՋԵԲ-ի միջև 15.12.2005թ. կնքված «Համաֆինանսավորման» ծրագրի իրականացման պայմանագրի շրջանակներում կնքվեց նոր համաձայնագիր, որով մինչ այդ գործող 5.0 մլն. ԱՄՆ դոլար միջոցներին ավելացվեց ևս 2.0 մլն. ԱՄՆ դոլար՝ ծրագրի ընդհանուր արժեքը հասցնելով 7.0 մլն. ԱՄՆ դոլարի:

Բանկը «MoneyGram» միջազգային դրամական փոխանցումների համակարգի կողմից 2009թ. արդյունքներով պարգևատրվեց պատվոգրով և ճանաչվեց 2009թ. լավագույն բանկ հաճախորդների սպասարկման ոլորտում:

Միացել է «Ria Money Transfers» վճարահաշվարկային համակարգին:

Գործարկվել է «ՇԻՐԱԿ» մասնաճյուղը:

2010

Հունիսին Բանկի և ՎՋԵԲ-ի միջև կնքվեց սինդիկացված վարկի թվով երկրորդ պայմանագիրը, որի համաձայն համաշխարհային ճանաչում ունեցող չորս ֆինանսական հաստատություններ՝ ՎՋԵԲ-ը, ավստրիական UniCredit Bank Austria AG, անգլիական FBN Bank (UK) Limited բանկերը և շվեյցարական Blue Orchard Finance ֆինանսական կազմակերպությունը Բանկին տրամադրեցին 10.0 մլն. ԱՄՆ դոլարի սինդիկացված վարկ, որն ուղղվել է փոքր և միջին բիզնեսի վարկավորմանը:

Դեկտեմբերին, Բանկի, ՄՖԿ-ի և FMO ֆինանսական կազմակերպության միջև կնքվեց վարկային պայմանագիր, որի համաձայն Բանկին տրամադրվեց 10.0 մլն. ԱՄՆ դոլարի վարկ, որն ուղղվել է փոքր և միջին բիզնեսի վարկավորմանը:

Բանկը «MoneyGram» միջազգային դրամական փոխանցումների համակարգի կողմից 2010թ. արդյունքներով երկրորդ տարին անընդմեջ ճանաչվեց որպես «Հայաստանի Հանրապետությունում համակարգով հաճախորդներին գերազանց

2010

In June, the second syndicated loan agreement was signed between the Bank and EBRD, under which 4 internationally known financial institutions - EBRD, UniCredit Bank Austria AG, FBN Bank (UK) Limited, and Blue Orchard Finance of Switzerland - extended a USD 10m syndicated loan to the Bank for on-lending to small and medium-size businesses.

In December, an agreement was signed with International Finance Corporation and FMO, a financial institution, for USD 10m loan designed for on-lending to small and medium-size businesses.

For the second year in a row, the Bank won the recognition of MoneyGram international clearing system for Excellent Customer Service in the Republic of Armenia for its performance in 2010.

UniCredit Bank AG granted the Bank Excellence for Quality Award for high quality EUR transfers in 2010.

Opened YEGHEGNADZOR Branch.

2011

For the first time in Armenia, EBRD extended its participation (25%+1 share) in the Bank's charter capital for the maximum period (another 3 years) allowed under its policy.

Agreement on provision of a credit line for Trade Finance was signed between the Bank and Asian Development Bank, under which the Bank joined the Trade Finance Program of Asian Development Bank.

The second USD 5m loan agreement for SME lending was signed between the Bank and Black Sea Trade and Development Bank the resources attracted under which have been directed to the lending of small and medium business.

A loan agreement for the AMD equivalent of USD 6m was signed between the Bank and EBRD for on-lending to micro, small and medium-sized businesses.

Became a member of VISA international clearing system.

Commerzbank AG of Germany granted Excellence in Quality award for high-quality transfers in EUR in 2011.

Joined Intel Express clearing system.

Opened NUBARASHEN, GAVAR and ROSSIA branches as well as relocated and renamed SARAJOV Branch.

2012

Joined Unistream and Golden Money Transfer clearing systems.

2013

Received ISO/IEC 27001:2005 (Information Security Management System) certificate.

Excellence in Quality a long term and effective cooperation certificate, was awarded by MoneyGram.

Commerzbank AG of Germany granted ARMECONOMBANK OJSC the Excellence for Quality award for executing high-quality, faultless and fast international transfers in 2013.

Opened HRAZDAN-MICRO Branch.

2014

Asian Development Bank granted a Leading Partner Bank in Armenia award to ARMECONOMBANK OJSC under Trade Finance Project.

սպասարկող բանկ»:

Ավստրիական UniCredit Bank AG-ն Բանկին շնորհել է «Որակի գերազանցության» մրցանակ՝ 2010թ. ԵՎՐՈ-ով փոխանցումների բարձր որակ ապահովելու համար:

Գործարկվել է «ԵՂԵԳՆԱԶՈՐ» մասնաճյուղը:

2011

Հայաստանում առաջին անգամ ՎՋԵԲ-ն իր գործառնություններով հնարավոր առավելագույն ժամկետով (ևս երեք տարով) երկարաձգեց իր մասնակցությունը (25% +1 բաժնետոմս) Բանկի կանոնադրական կապիտալում:

Բանկի և Ասիական զարգացման բանկի միջև կնքվեց արտաքին առևտրի ֆինանսավորման վարկային գծի տրամադրման պայմանագիր, որի համաձայն բանկը միացավ Ասիական զարգացման բանկի Առևտրի խթանման ծրագրին:

Բանկի ու Սևծովյան Առևտրի և Զարգացման Բանկի միջև կնքվեց 5.0 մլն. ԱՄՆ դոլար գումարով թվով երկրորդ վարկային պայմանագիրը, որով ներգրավված միջոցներն ուղղվել են փոքր և միջին բիզնեսի վարկավորմանը:

Բանկի և ՎՋԵԲ միջև կնքվեց 6.0 մլն. ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ գումարով վարկային պայմանագիր, որով ներգրավված միջոցներն ուղղվել են միկրո, փոքր և միջին բիզնեսի վարկավորմանը:

Բանկը դարձել է «VISA» միջազգային վճարահաշվարկային համակարգի անդամ:

Գերմանական Commerzbank AG-ն Բանկին շնորհել է «Որակի գերազանցության» մրցանակ՝ 2011թ. ԵՎՐՈ-ով փոխանցումների բարձր որակ ապահովելու համար:

Միացել է «Intexpress» վճարահաշվարկային համակարգին:

Գործարկվել են «ՆՈՒԲԱՐԱՇԵՆ», «ԳԱՎԱՌ» և «ՌՈՍԻԱ» մասնաճյուղերը, ինչպես նաև հասցեափոխված և անվանափոխված «ՍԱՐԱՋՈՎ» մասնաճյուղը:

2012

Բանկը միացել է «Unistream» և «Golden money transfer» վճարահաշվարկային համակարգերին:

2013

Բանկը ստացել է ISO/IEC 27001:2005 (Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգ) հավաստագիր:

«MoneyGram» վճարահաշվարկային համակարգը շնորհել է «ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ՈՐԱԿ» երկարաժամկետ և արդյունավետ համագործակցության հավաստագիր:

Գերմանական Commerzbank AG-ն Բանկին շնորհել է «Որակի գերազանցության» մրցանակ՝ 2013թ. միջազգային փոխանցումների բարձր որակ ապահովելու, ինչպես նաև անթերի և արագ իրականացնելու համար:

Գործարկվել է «ՀՐԱԶԴԱՆ-ՄԻԿՐՈ» մասնաճյուղը:

2014

Ասիական Զարգացման Բանկը Առևտրի ֆինանսավորման ծրագրի շրջանակներում Բանկին շնորհել է «Հայաստանում առաջատար գործընկեր բանկ» մրցանակ:

2015

Joined the securities index system.

MoneyGram clearing system granted ARMECONOMBANK OJSC a Certificate for Professionalism and Outstanding Contribution for Money Transfer Service Development in Armenia.

A loan agreement for USD 3.0m was signed between ARMECONOMBANK OJSC and BLUEORCHARD

MICROFINANCE FUND LLC investment company for on- lending to small and micro businesses.

The top managers of ARMECONOMBANK OJSC and BTA BANK CJSC of Kazakhstan signed a memorandum of understanding on consolidation of BTA BANK CJSC, a bank registered and operating in RA, with ARMECONOMBANK OJSC.

Joined CONVERSE TRANSFER clearing system.

2016

The charter capital was supplemented with AMD 2,297,995,000.

BTA BANK CJSC was consolidated with ARMECONOMBANK OJSC, as a result of which the equity of ARMECONOMBANK OJSC increased by AMD 5,294,232,000 and the branch network expanded by 6 branches.

Signed a loan agreement for USD 10.0m with SYMBIOTICS S.A. of Switzerland and MICRO, SMALL & MEDIUM ENTERPRISES BONDS S.A. of Luxembourg to finance micro, small and medium businesses.

As a result of the cooperation with Swiss BLUEORCHARD FINANCE S.A, USD 5.0m loan agreement was signed between ARMECONOMBANK OJSC and BLUEORCHARD MICROFINANCE FUND LLC investment company located in Grand Duchy of Luxembourg to finance micro and small businesses.

Signed a loan agreement for USD 6.0m with INCOFIN CVBA, a Belgian investment company, to finance micro and small businesses.

As a result of cooperation with Swiss SYMBIOTICS S.A., a loan agreement was signed between ARMECONOMBANK OJSC and GLOBAL IMPACT

INVESTMENTS SARL, an investment company located in Luxembourg for the amount of USD 5.0 million to finance micro businesses.

As a result of cooperation with Swiss SYMBIOTICS S.A., loan agreement was signed between ARMECONOMBANK OJSC and FINETHIC S.C.A., an

investment company located in Luxembourg, for the amount of USD 1.0m to finance micro and small businesses.

Within the framework of Trade Finance Program, Asian Development Bank granted ARMECONOMBANK OJSC a Leading Partner Bank in Armenia award.

Joined MoneyTun and Faster clearing systems.

Opened YEREVAN Branch, renovated and reconstructed ROSSIA Branch.

2017

AMD 9,077,411,700 from share premium was directed to the replenishment of the charter capital, as a result, the charter capital amounted to AMD 13,708,744,200 and the nominal value of a single common share increased by AMD 4,900 and made AMD

2015

Բանկը դարձել է արժեթղթերի հաշվարկային համակարգի անդամ:

«MoneyGram» վճարահաշվարկային համակարգը Բանկին շնորհել է «Պրոֆեսիոնալիզմի և Հայաստանում փոխանցման ծառայությունների զարգացմանը նպաստելու համար» հավաստագիր:

Բանկի և «BLUEORCHARD MICROFINANCE FUND» LLC ներդրումային ընկերության միջև կնքվեց 3.0 մլն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր, որով ներգրավված միջոցներն ուղղվել են փոքր և միկրո բիզնեսի վարկավորմանը:

Բանկի և Ղազախստանի «ԲՏԱ բանկ» ՓԲԸ-ի ղեկավարների միջև ստորագրվեց երկու բանկերի միացման հուշագիր՝ ՀՀ-ում գրանցված և գործունեություն իրականացնող «ԲՏԱ բանկ» ՓԲԸ-ն Բանկին միացնելու նպատակով:

Բանկը միացել է «CONVERSE TRANSFER» վճարահաշվարկային համակարգին:

2016

Կանոնադրական հիմնադրամը համալրվել է 2,297,995 հազ. ՀՀ դրամով:

«ԲՏԱ Բանկ» ՓԲԸ-ն միացավ «ՀԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ» ԲԲԸ-ին, որի արդյունքում Բանկի կապիտալն ավելացավ 5,294,232 հազ. դրամով, իսկ մասնաճյուղային ցանցը՝ 6 մասնաճյուղով:

Բանկի և շվեյցարական «SYMBIOTICS» SA ու Լյուքսեմբուրգի Մեծ Դքսությունում գտնվող «MICRO, SMALL & MEDIUM ENTERPRISES BONDS» S.A. ֆինանսական հաստատությունների միջև կնքվեց 10.0 մլն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր, որով ներգրավված միջոցներն ուղղվել են միկրո, փոքր և միջին բիզնեսի վարկավորմանը:

Վարկային ռիսկը վարկի, հաշվարկված տոկոսի կամ դրանց մի մասի պայմանագրով սահմանված ժամկետներից ուշացման կամ անվերադարձելիության հնարավոր վտանգն է՝ պայմանավորված վարկառուի ֆինանսական վիճակի վատթարացմամբ, գրավի արժեզրկմամբ և նման այլ պատճառներով:

Վարկային պորտֆելի կառուցվածքի հնարավոր տարբեր փոփոխությունների ազդեցությունները Բանկի գործունեության ընթացիկ ցուցանիշների վրա վերլուծվում և գնահատվում են սթրես քեստավորման և տարբեր հավանական սցենարների դիտարկման միջոցով: Վերոնշյալ սթրեսային սցենարների վերլուծության շրջանակներում իրականացվում է նաև նորմատիվների խախտման կրիտիկական կետերի հաշվարկ և վերլուծություն: Վարկային ռիսկի կառավարման շրջանակներում իրականացվում է նաև վարկային ռիսկի դասերի միգրացիոն մատրիցների վերլուծություն:

Վարկային ռիսկի կառավարման արդյունավետ համակարգի շնորհիվ Բանկի վարկային պորտֆելը շարունակում է պահպանել ավանդական բարձր որակը և ցածր ռիսկայնության աստիճանը:

ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՌԻՍԿ

Տոկոսադրույքի ռիսկը բանկի զուտ տոկոսային եկամտի կամ կապիտալի տնտեսական արժեքի վրա շուկայական տոկոսադրույքների փոփոխման բացասական ազդեցության հավանականությունն է:

Բանկում տոկոսադրույքների ռիսկը գնահատվում է միջազգային պրակտիկայում լայն տարածում գտած «GAP մոդելի», «Դյուրացիայի մոդելի» և սթրես

Appropriate economic-mathematical models have been developed and implemented in the Bank for risk assessment, and risk mitigation measures are taken after assessment or decision is made on moderate assumption of such risks.

The Bank has been continuously working to modernize the risk assessment approaches and increase the application of their results in managerial decision-making processes.

Pursuant to ARMECONOMBANK OJSC Risk Management Policy and considering the principles of risk management of Basel Committee the following models of assessment and management of basic risks have been adopted:

- credit risk
- interest rate risk
- liquidity risk
- currency risk
- operating risk

CREDIT RISK

Credit risk is the probability of late repayment or non-repayment of a loan, accrued interest, or a part thereof due to the worsening of the borrower's financial condition, devaluation of the collateral, or other similar causes.

Stress tests and various probable scenarios are used to analyze and assess the impacts of different possible changes in loan portfolio structure on the indicators of the Bank's current operations. Within the framework of the analysis of the aforementioned stress scenarios, calculation and analysis of critical points for deviations from regulatory standards is performed. Within the framework of credit risk management, analysis of the migration matrices of credit risk categories is carried out as well.

Thanks to the efficient system of credit risk management, the loan portfolio of the Bank continues to maintain its traditionally high quality and low risk level.

INTEREST RATE RISK

Interest rate risk is the probability of the negative impact of any changes of market interest rate on net interest income or economic value of the capital.

To assess the interest rate risk, the Bank uses the internationally accepted GAP Model, Duration Model, and stress tests based on analysis of any imbalance between assets and liabilities that are sensitive to interest rate fluctuations.

թեստերի կիրառմամբ, որոնց հիմքում ընկած է տոկոսադրույքների փոփոխման նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների դիսբալանսի վերլուծությունը:

Իրականացվում է նաև առանձին արժույթներով արտահայտված ակտիվների և պարտավորությունների ճեղքվածքների վերլուծություն՝ զուտ տոկոսային եկամտի վրա տոկոսադրույքների փոփոխության ազդեցության տեսանկյունից:

ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՌԻՍԿ

Իրացվելիության ռիսկը հավանականությունն է, որ բանկն ի վիճակի չի լինի ճիշտ ժամանակին բավարարելի պարտատերերի պահանջներն առանց լրացուցիչ կորուստներ կրելու:

Ֆիզիկական և իրավաբանական անձանց ժամկետային ավանդների որոշակի մասի պայմանագրի ժամկետից շուտ ետ պահանջման և ցպահանջ պարտավորությունների որոշակի մասի ետ պահանջման դեպքում նորմատիվների փոփոխությունների և դրանց խախտման հավանականության գնահատման նպատակով Բանկում կիրառվում է սթրես թեստավորման սցենարային մոդել, որը հնարավորություն է տալիս նաև հաշվարկել նշված նորմատիվների խախտման կրիտիկական կետերը:

Բանկի կողմից ներգրավված ցպահանջ և ժամկետային միջոցների կենտրոնացումների ռիսկի գնահատման տնտեսամաթեմատիկական մոդելը հնարավորություն է տալիս գնահատել ֆիզիկական և իրավաբանական անձանց ցպահանջ և ժամկետային միջոցների կենտրոնացումների մակարդակները: Նշված մոդելի շրջանակներում իրականացվում է ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավված միջոցների կենտրոնացվածության գործակիցների հաշվարկ, դրանց դինամիկայի վերլուծություն, ինչպես նաև իրացվելիության նորմատիվների վրա կենտրոնացվածության ռիսկի հնարավոր ազդեցության վերլուծություն՝ կիրառելով սթրես թեստերի մեթոդաբանությունը:

ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՌԻՍԿ

Արտարժույթային ռիսկը արտարժույթի փոխարժեքների տատանման արդյունքում Բանկի կորուստներ կրելու հավանականությունն է:

Բանկում արտարժույթային ռիսկի կառավարումն իրականացվում է կիրառելով միջազգային պրակտիկայում ընդունված VAR մեթոդաբանությունը, ինչպես նաև սթրես թեստերի սցենարային վերլուծության մեթոդները: Սթրես թեստերի սցենարային վերլուծություններում դիտարկվում է արտարժույթի փոխարժեքի կտրուկ տատանման ազդեցությունը տնտեսական նորմատիվների վրա: Դիտարկվում են՝ ՀՀ դրամի արժեվորման և արժեզրկման սթրեսային սցենարներ, ինչպես նաև ըստ առանձին արտարժույթների փոխարժեքների տատանման սցենարային համակցության տարբերակ՝ ապահովելով հնարավոր առավելագույն չափի արտարժույթային ռիսկից պաշտպանություն և հեջավորում:

Also, analyses of gaps between assets and liabilities in individual currencies are conducted relative to the impact of fluctuations of their interest rates on net interest income.

LIQUIDITY RISK

Liquidity risk is the probability that the Bank may not be able to timely meet the demands of its creditors without incurring additional losses.

To assess the changes and the probability of deviations from regulatory standards in the event of preterm withdrawal of a part of time deposits and withdrawal of a part of demand deposits by individuals and companies, scenario-based stress-test models are employed to calculate the critical points for deviations of mentioned standards.

The economic-mathematical model of the assessment of the concentration risk for demand and time resources attracted by the Bank allows to assess the concentration levels of such resources placed by individuals and corporate entities. In the framework of this model, calculation of these concentration coefficients of the resources attracted, analysis of their dynamics, as well as analysis of the possible impact of the concentration risk on liquidity standards through stress test methodology are carried out.

CURRENCY RISK

Currency risk is the probability of losses for the Bank due to currency exchange rate fluctuations.

The management of currency risk is performed through internationally accepted VAR methodology and scenario analyses of stress tests. These analyses view the impact of rapid fluctuations of currency exchange rates on prudential standards. Stress scenarios involving revaluation and devaluation of the Armenian dram and combinations of scenarios involving exchange rate fluctuations for individual currencies that would provide for maximum protection and hedging of foreign exchange risk are viewed.

The economic-mathematical model developed by VAR methodology and used to ensure the minimum level of foreign currency risk allows to assess the risk of probable losses caused by open foreign exchange positions of the Bank and take appropriate

Արտարժուքային ռիսկի նվազագույն մակարդակի ապահովման նպատակով կիրառվող՝ VAR մեթոդաբանության հիմքի վրա մշակված տնտեսամաթեմատիկական մոդելը հնարավորություն է տալիս գնահատել Բանկի արտարժուքային բաց դիրքերով պայմանավորված հնարավոր կորուստների ռիսկը և ձեռնարկել ռիսկերի զսպման համապատասխան միջոցառումներ:

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՌԻՍԿ

Գործառնական ռիսկը սահմանվում է որպես ուղղակի կամ անուղղակի կորուստների վտանգ՝ պայմանավորված բանկի անձնակազմի ոչ համարժեք կամ սխալ (պատահական, միտումնավոր) գործողություններով, բանկային գործընթացների կազմակերպման և կատարման թերություններով, խափանումներով (սարքավորումների տեխնիկական անսարքություն, ընթացակարգերի անկատարություն), ինչպես նաև արտաքին միջավայրի անբարենպաստ գործողություններով և իրավիճակներով (խարդախություն, տարերային աղետ):

Գործառնական ռիսկի կառավարման արդյունավետ համակարգի կիրառումն ապահովվում է՝ օրական հսկողության իրականացման, պարբերական և թեմատիկատեղումների միջոցով գործող կանոնակարգվածության մակարդակի պատշաճության գնահատման, կանոնակարգման կարիք ունեցող գործառնական վերհաման, հնարավոր ռիսկերի բացահայտման, ռիսկերի զսպմանը և ապագայում դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումների ձեռնարկման միջոցով:

Գործառնական ռիսկի զսպման նպատակով իրականացվում է գործառնական ռիսկի պատահարների վերաբերյալ տվյալների բազայի հավաքագրում, վերլուծություն և ամփոփ արդյունքների հիման վրա ռիսկի զսպմանն ուղղված միջոցառումների իրականացում: Իրականացվում են նաև բիզնես գործընթացներում առկա գործառնական ռիսկերի բացահայտմանն ուղղված մշտադիտարկումներ, որոնց արդյունքում ևս ձեռնարկվում են համապատասխան կարգավորող և ռիսկերի զրսպմանն ուղղված միջոցառումներ:

ԲԱՆԿԻ ՆԵՐՔԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՍՆԱԿԱՐԳ

Բանկում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում ներքին հսկողության գործուն և արդյունավետ համակարգի շարունակական զարգացման գործընթացին՝ ապահովելով մատուցվող ծառայությունների, կատարվող գործառնականությունների հստակ կանոնակարգումը: Բանկի ներքին հսկողության պատշաճ ապահովման կարևոր գրավականներից է ներքին վերահսկողության համակարգի արդյունավետ գործունեությունը: Դրա հետ կապված նշենք, որ հաշվետու տարում իրականացվել է բանկի տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների թվով 43 համալիր վերստուգումներ և տարածքային ու կառուցվածքային ստորաբաժանումների դրամարկային հանգույցների, բանկի հաշվապահական

risk mitigation measures.

OPERATING RISK

Operating risk represents the probability of direct or indirect losses caused or conditioned by inadequate or incorrect (accidental or intentional) activities of the personnel, weaknesses in the organization and execution of the Bank's operations, breakdowns (technical malfunction of equipment, flaws in procedures) as well as by adverse activities and situations in the environment (fraud, natural disasters).

The efficiency of the risk monitoring system is achieved by everyday monitoring, regular and target-specific audits to provide for assessments of prudence of the existing regulation, identification of functions requiring regulation, identification of possible risks, measures aimed at reduction and prevention of risks in the future.

To reduce operational risk, a database of operating risk events is collected, analyzed, and risk reduction steps are taken accordingly. The Bank also monitors its business operations to identify any potential operating risks, which also leads to appropriate regulatory and risk reduction efforts.

INTERNAL CONTROL SYSTEM OF THE BANK

The Bank pays special attention to the continuous development of a practical and efficient system of internal control to ensure clear regulation of all services and operations. One of the guarantees of having adequate internal control in place is the efficient operation of the Bank's internal audit system. With respect to this, we should mention that in the reporting year 43 comprehensive audits of territorial and structural units and 132 inventories of cash sections in territorial and structural units, target audits related to the accuracy of accounting, risk reduction, existing procedures and agreements, and other areas of the Bank's activities were carried out.

The summaries and analyses of the results of the

հաշվառման վարման հստակությամբ, ռիսկերի նվազմանը, գործող կարգերին և մշակված պայմանագրերին ու Բանկի գործունեության այլ ոլորտներին վերաբերվող թվով 132 նպատակային վերստուգումներ:

Նշված վերստուգումների և ուսումնասիրությունների արդյունքների ամփոփումը և վերլուծությունը նպատակաուղղվել է գործող թերությունների վերացմանը, բացահայտված ռիսկերի կանոնակարգմանը, կանխարգելիչ միջոցառումների մշակմանը և այդ ամենի արդյունքում բանկի գործունեության ընդհանուր ռիսկայնության նվազեցմանը և պատշաճ հսկողության ապահովմանը:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆՈՐԱՍՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայէկոնոմբանկն իր գործունեությունը նպատակաուղղում է հաճախորդներին ծառայությունների ընդգրկում փաթեթով ապահովմանը, որը ենթադրում է մատուցվող ծառայությունների մշտական բազմազանում և սպասարկման որակի բարձրացում:

Հայէկոնոմբանկի հաջողությունների կարևորագույն գրավականը հաճախորդների արդյունավետ սպասարկումն է: Բանկի հաճախորդները գտնվում են մշտական ուշադրության կենտրոնում և արվում է ամեն հնարավորն առավել ամբողջական բավարարելու նրանց պահանջարկը բարձրակարգ բանկային ծառայությունների նկատմամբ, որը ենթադրում է նորագույն արդիական թվային տեխնոլոգիաների կիրառում, մատուցվող ծառայությունների մշտական բազմազանում և սպասարկման որակի բարձրացում: Նոր պրոդուկտների ներդրման ու զարգացման, նորագույն արդիական թվային տեխնոլոգիաների կիրառման և զարգացման գործընթացները մշտապես գտնվում են բանկի ղեկավարության ուշադրության կենտրոնում և աշխատակիցների ամենօրյա պարտականությունների մաս է կազմում նորամուծությունների վերաբերյալ առաջարկներով հանդես գալու գործառնությամբ, որի արդյունքում ստեղծվում և կյանքի են կոչվում հաճախորդների հարմարավետ սպասարկմանն ուղղված բազմաթիվ նորարարական լուծումներ և նոր պրոդուկտներ: Պարբերական մոնիտորինգը և հարցումները թույլ են տալիս բանկին թե՛ տարածքային, թե՛ իրավական կարգավիճակի, թե՛ տարիքային և սոցիալական խմբերի դասակարգմամբ արագ արձագանքել նոր պահանջարկի բավարարմանը, մատուցվող ծառայությունների կատարելագործմանը, որն իր դրական արտացոլումն է գտնում սպասարկման որակի, նոր հաճախորդների ներգրավման և, ըստ այդմ, բանկի եկամուտների ավելացման վրա:

Հաշվետու տարվա ընթացքում, ինչպես և նախորդ տարիներին, մեծ ուշադրություն է դարձվել մատուցվող ծառայությունների բազմազանման, դրանց որակի բարձրացման գործընթացին: Ընդլայնվել է վարկային պրոդուկտների, վճարահաշվարկային ծառայությունների, «AEB Online» և «AEB Mobile» համակարգերով ու ինքնասպասարկման տերմինալների միջոցով մատուցվող ծառայությունների ցանկը: Շարունակվել են Բանկի տեխնիկական վերազինման և գործունեության ծրագրային ապահովման կատարելագործման աշխատանքները, որն առավել

of the aforementioned audits and surveys were used for elimination of the existing weaknesses, regulation of the revealed risks, and development of preventive measures to reduce the overall risk level in the Bank's operations and ensure that appropriate control is in place.

SERVICES AND INNOVATIONS

Armeconombank aims to offer its customers comprehensive service packages, which implies continuous diversification of the services and improvement of the service quality.

Efficient customer service is a major guarantee of success for the Bank. The customers are in constant focus and the Bank has been doing the utmost to fully satisfy their need for high-quality banking services, which in its turn implies application of up-to-date digital technologies, continuous diversification of the services offered and improvement of service quality. The processes of introduction and improvement of new products and modern digital technologies is under the management's permanent attention, and the personnel's everyday functions suggestion of innovative ideas, which results in various innovative solutions and new products that make customer service more comfortable. The regular monitoring and surveys enable the Bank to classify the customers by location, legal status, age, and social group to rapidly respond to any new demands and any needs for further improvement of services, which in its turn has positive impact on service quality, attraction of new customers and, accordingly, on the earnings.

In the reporting year, as in the preceding years, the Bank attached great importance to diversification, the processes of quality improvement. The list of credit products, clearing services and services rendered via AEB Online and AEB Mobile systems and self-service terminals expanded. The technical upgrading software optimization efforts to make the Bank's performance more efficient continued.

The bank implemented the biometric identification feature in AEB Mobile system, the option of accepting payments via SoftPos terminals based on "Tap to Phone" technology, started to make transfers via Moneysend transfer system of Mastercard payment system, launched VSPS (VISA Stop Payment Service) which enables the customer to view the card's links to other applications/websites in AEB Mobile system and unlink the card if desired, launched the Bank's Loyalty Program, to build a loyalty management platform, which implies accumulation of bonuses for using card and other banking products and further use of such bonuses for payments for or cashbacks from services offered by hotels, airlines, launched a verification system of

արդյունավետ է դարձնում բանկի գործունեությունը:

Բանկը ներդրեց «AEB Mobile» համակարգում բիզնեսի նույնականացման ծրագիրը, «Tap to Phone» տեխնոլոգիայով աշխատող SoftPos տերմինալներով վճարումների ընդունման հնարավորությունը, սկսեց փոխանցումներ իրականացնել «Mastercard» վճարային համակարգի «Moneysend» փոխանցման համակարգով, գործարկեց «VSPS» («VISA Stop Payment Service») ծառայությունը, որը հաճախորդին հնարավորություն է տալիս «AEB Mobile» համակարգում տեսնել քարտի կցագրված լինելը այլ հավելվածներին/կայքերին և ցանկության դեպքում ապակցել քարտը, գործարկեց Բանկի Հավատարմության ծրագիրը (Loyalty Program), որի միջոցով հնարավորություն է ստեղծվել Բանկում կառուցել հավատարմության կառավարման հարթակ, որը ենթադրում է բոնուսների կուտակում քարտային և բանկային այլ պրոդուկտներից օգտվելու դիմաց, այնուհետև կուտակված բոնուսների օգտագործում հյուրանոցների, ավիաընկերությունների կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարման կամ հետվճարի (Cashback) ստացման համար, մշակեց հաճախորդի հետ հաղորդակցման միջոցների՝ հեռախոս, էլ. փոստ, վերիֆիկացիայի համակարգը, «AEB Mobile» համակարգի միջոցով «Visa Guru Travel» քարտերին, աշխատավարձային քարտերին սկսեց տրամադրել օնլայն վարկային գծեր, միացավ «Ubpay» վճարահաշվարկային համակարգին: «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի հետ տրանսպորտային նախագծի շրջանակում ակտիվացվեց ֆիզիկական և վիրտուալ POS տերմինալներ:

Ընդլայնվեցին ինքնասպասարկման տերմինալներով մատուցվող ծառայությունները, մասնավորապես՝ բժշկական հաստատությունների ցանկի ավելացում, որոնց համար ընդունվում են ծառայությունների վճարներ: Բանկը ներդրեց նաև մի շարք ծրագրային համակարգեր հաճախորդների և հեռահար, և տեղում սպասարկման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

ՎճԱՐԱՅԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բանկի կողմից մատուցվող վճարահաշվարկային և փաստաթղթային ծառայություններն առանձնահատուկ տեղ են գրավում հաճախորդներին առաջարկվող ծառայությունների շարքում: Բանկն ակտիվորեն օգտագործում է առկա համակարգերի հնարավորությունները՝ արդյունավետ աշխատանքներ ծավալելով նաև վճարման մոր ձևերի մշակման ու ներդրման առումով: Այսպես, բանկը դրամական փոխանցումներ է իրականացնում «MoneyGram», «Ria Money Transfers», «IntelExpress», «Golden Money Transfer», «MoneyTun», «UBPAY» ինչպես նաև ՀԷԲ փոխանցումների համակարգերով՝ իր հաճախորդին տալով ընտրության լայն հնարավորություն: Հաշվետու տարում վճարահաշվարկային ծառայություններից ստացված եկամուտները (ներառյալ ՀԷԲ փոխանցումներից ստացված եկամուտները) կազմել են 798.5 հազ. ԱՄՆ դոլար:

means of communication with customer (phone, e-mail), started to provide online credit lines on Visa Guru Travel cards and salary cards via AEB Mobile system, joined the Ubpay clearing system. Within the transport project with TEL-CELL OJSC physical and virtual POS terminals were activated.

The range of services provided via self-service terminals further expanded to include a larger list of medical institutions to accept service fees. The bank also implemented a range of software systems to increase the efficiency of both remote and on-site customer service.

CLEARING SERVICES, DOCUMENTARY OPERATIONS

The clearing and documentary services provided by the Bank have a special place in the range of services offered to the customers. The Bank makes extensive use of the possibilities of the existing clearing systems and, at the same time, efficiently works to develop and launch new payment methods. Currently, the Bank offers money transfers through MoneyGram, Ria Money Transfers, IntelExpress, Golden Money Transfer, MoneyTun, UBPAY clearing systems, AEB transfer systems, which provides the customers with a wide choice. In the reporting year, the earnings from clearing services (including the income from AEB transfers) amounted to USD 798,500. The earnings from clearing services for the past three years are shown in the chart below.

The Bank is also active in the Armenian documentary operations market as it issues and services letters of credit and offers other types of documentary operations.


Բանկն ակտիվ գործունեություն է ծավալում ՀՀ փաստաթղթային գործառնությունների շուկայում՝ ինչպես ակրեդիտիվների թողարկման և սպասարկման բնագավառում, այնպես էլ փաստաթղթային գործառնությունների այլ ոլորտներում:

ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բանկի կորպորատիվ կառավարման համակարգի կատարելագործման շրջանակներում առաջնային տեղ է հատկացվում արդյունավետ կադրային քաղաքականության վարմանը, որը ենթադրում է բանկի կադրերի ընտրության, վերապատրաստման, պահեստային բանկի ստեղծման, պաշտոնային առաջընթացի հստակ պլանավորված համակարգի ներդրում:

Հաշվի առնելով բանկային ռիսկերի կառավարման, ինչպես նաև առաջընթաց և կայուն զարգացման համար կարևորագույն գործոնի՝ համախմբված քիմային աշխատանքի դերը՝ մեն տեղ է հատկացվում գործող կադրերի վերապատրաստմանը, սահուն սերնդափոխությանը, նոր, հեռանկարային կադրերի ներգրավմանը՝ լայնորեն օգտվելով մրցութային ընտրությունից, ստաժավորման կազմակերպման գործընթացից, մասնագիտական առաջատար ԲՈՒՀ-երի հետ համագործակցությունից:

Ստորև բերված գրաֆիկում ներկայացված է բանկի աշխատողների շարժը.



Բանկի աշխատակիցների մեծամասնությունը՝ 63.9%-ը կանայք են, համապատասխանաբար 36.1%-ը՝ տղամարդիկ: Բանկի աշխատակիցների 46%-ն ունեն 10 և ավելի տարի բանկային աշխատանքի ստաժ, 26%-ը՝ 5-ից 10 տարի բանկային ստաժ, 23%-ը՝ 1-ից 5 տարի և 5%-ը՝ մինչև 1 տարի: Բանկի աշխատակազմի խոշորագույն տարիքային խումբը՝ 25-34 տարեկան աշխատակիցներն են, որոնք կազմում են աշխատակիցների թվաքանակի 36%-ը:

31.12.2024թ. դրությամբ բանկի աշխատակիցների ընդհանուր քանակը կազմել է 995 մարդ՝ նվազելով մախորդ տարվա համեմատ 0.2%-ով:

HUMAN RESOURCE POLICY

In line with the improvement of the Bank's corporate governance system, efficient human resources policy is a priority, which implies availability of a well-planned system for personnel selection and training, establishment of a reserve personnel pool, and a clearly planned career advancement system.

Seeing consolidated teamwork as the most significant element in both banking risk management and steady progress, the Bank pays great attention to personnel training, smooth shift of workforce generations, attraction of new and prospective specialists based on extensive use of contest-based recruitment, internship, and cooperation with the leading higher educational institutions in Armenia.

In the chart below, the turnover of the Bank's employees is presented.

The majority of the Bank's employees, 63.9%, are female and, accordingly, 36.1% are male. 46% of the Bank employees have 10 and more years of banking career record, 26% have 5 to 10 years, 23% have 1 to 5 years, and 5% have up to 1 year. The largest age group includes employees aged 25-34 and accounts for 36% of the total number of employees.

As at 31.12.2024, the total number of employees was 995; this number has decreased by 0.2% against the previous year.

ՄԱՍՆԱԾՅՈՒՂԱՅԻՆ ՑԱՆՑ


2024թ. արդյունավետ էր տարածքային քաղաքականության՝ բանկի մասնաճյուղերի զարգացման առումով:

Բանկի որդեգրած տարածքային քաղաքականության շրջանակներում հաշվետու տարում հաջողությամբ իրականացվել են լայնածավալ աշխատանքներ գործող մասնաճյուղերի ինչպես վերանորոգման, այնպես էլ վերակառուցման, ընթացիկ տեխնիկական վերազինման ուղղությամբ՝ բարձրացնելով մասնաճյուղերի մրցունակությունը: Ընդլայնվել է մասնաճյուղերի գործունեությունը բոլոր ոլորտներում, երևան քաղաքի և 33 մարզերի մի շարք մասնաճյուղեր ակտիվորեն ներգրավվել են մոր վարկային ծրագրերում:


Հաշվետու տարում մասնաճյուղերի ակտիվների և պարտավորությունների աճը զուգակցվեց մոր հեռանկարային հաճախորդների ներգրավմամբ, մատուցվող ծառայությունների ընդլայնմամբ և բազմազանմամբ:

Մասնաճյուղերի գործունեությունը բնորոշող հիմնական ցուցանիշների փոփոխությունները երեք տարվա համեմատականով արտացոլված են գրաֆիկներով և աղյուսակով:

Մասնաճյուղերի վարկեր
(միջին) մլն. դրամ
Loans at branches
(average) (mln drams)



Մասնաճյուղերի ցպահանջ ավանդներ
(միջին) մլն. դրամ
Demand deposits at branches
(average) (mln drams)



BRANCH NETWORK


2024 was beneficial for the territorial policy in terms of development of the branches.

In line with the Bank's territorial policy, significant work was done in terms of repairs, reconstruction, and ongoing technical modernization of the operating branches to enhance their competitive capacities. The operations of branches expanded in all areas; the involvement of branches in new loan projects increased both in Yerevan and in the provinces.


In the reporting year, the growth of branch assets and liabilities occurred parallel with attraction of new prospective customers, expansion and diversification of the services offered.

The changes in the key performance indicators of the branches for the past three years are reflected in charts and table below.

Մասնաճյուղերի ժամկետային ավանդներ
(միջին) մլն. դրամ
Time deposits of branches
(average) (mln drams)




Մասնաճյուղերի մատուցած ծառայություններից
զուտ եկամուտ (մլն. դրամ)
Net income from services offered at branches
(mln. drams)



(մլն. դրամ) /
(mln drams)

Մասնաճյուղերի ցուցանիշներ / Branch indicators	2022	2023	2024	Տարեկան աճ Annual growth 2024/2023	Տարեկան աճի տեմպերը Annual growth rate (%)
Վարկային ներդրումներ /միջին/ Loans (average)	143,106.6	155,788.8	180,400.9	24,612.1	15.80
Ժամկետային ավանդներ /միջին/ Time deposits (average)	54,140.1	56,858.8	66,356.6	9,497.8	16.7
Ցպահանջ ավանդներ /միջին/ Demand deposits (average)	32,634.4	40,042.0	37,239.2	-2,802.8	-7.0
Մատուցված ծառայություններից զուտ եկամուտ Net income from services	2,979.5	2,659.4	3,078.2	418.8	15.75

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ՄԱՍՆԱՃՅՈՒԴԵՐՆ ԸՍՏ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ARMECONOMBANK OJSC BRANCHES BY REGIONS



ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐ BRANCHES	ՀԱՍՑԵ ADDRESS	ՀԵՌԱԽՈՍ TEL.
«ԱՐՈՎՅԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ABOVYAN BRANCH	ՀՀ, 2207, ք. Արովյան, Ինտերնացիոնալ փ. 1շենք, թիվ 29-32 շինություն 1 International St., bld, 29-32, Abovyan, 2207, RA	+374 10 510910 (0801) +374 10 510910 (0802)
«ԱՇՏԱՐԱԿ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ASHTARAK BRANCH	ՀՀ, 0201, ք. Աշտարակ, Ներսես Աշտարակեցու հրապ. 6 շենք 6 Nerses Ashtaraketsi Square, Ashtarak, 0201, RA	+374 10 510910 (2001) +374 10 510910 (2002)
«ԱՋԱՓՆՅԱԿ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ACHAPNYAK BRANCH	ՀՀ, 0078, ք. Երևան, Աջափնյակ, Մարգարյան փող. 14 շ., 57 տարածք 57 area, bld. 14 Margaryan St., Yerevan, 0078, RA	+374 10 510910 (4601) +374 10 510910 (4602)
«ԱՎԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ AVAN BRANCH	ՀՀ, 0063, ք. Երևան, Ավան, Մ. Խուդյակովի փողոց 177/7 177/7, M. Khudyakov St., Avan adm. district, Yerevan, 0063, RA	+374 10 510910 (7101) +374 10 510910 (7102)
«ԱՐԱԲԿԻՐ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ARABKIR BRANCH	ՀՀ, 0057, ք. Երևան, Կոմիտաս պող. 57, N 23 շինություն 57 Komitas Ave., bld. 23, Yerevan, 0057, RA	+374 10 510910 (0501) +374 10 510910 (0502)
«ԱՐԱՐԱՏ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ARARAT BRANCH	ՀՀ, 0602, ք. Արարատ, Շահումյան փ. 38 շենք 38 Shahumyan St., Ararat, 0602, RA	+374 10 510910 (3201) +374 10 510910 (3202)
«ԱՐԱՐԱՏՅԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ARARATYAN BRANCH	ՀՀ, 0082, ք. Երևան, Կենտրոն, Ծովակալ Իսակովի պողոտա 10 10, Tsovakal Isakov ave., Kentron adm. district, Yerevan, 0082, RA	+374 10 510910 (7001) +374 10 510910 (7002)
«ԱՐՄԱՎԻՐ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ARMAVIR BRANCH	ՀՀ, 0901, ք. Արմավիր, Ջիվանու փ. 8 8 Jivani St., Armavir, 0901, RA	+374 10 510910 (1001) +374 10 510910 (1002)
«ԱՐՏԱՇԱՏ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ARTASHAT BRANCH	ՀՀ, 0701, Արարատի մարզ, համայնք Արտաշատ, Աբարբեկյան փ. 135/3 135/3 Atarbekyan St., community Artashat, Ararat region, 0701, RA	+374 10 510910 (0901) +374 10 510910 (0902)
«ԱՐՏԱՇԻՍՅԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ARTASHISYAN BRANCH	ՀՀ, 0086, ք. Երևան, Շենգավիթ, Արտաշեսյան պող. 86/2 86/2 Artashesyan ave., Yerevan, 0086, RA	+374 10 510910 (7301) +374 10 510910 (7302)
«ԳԱՎԱՌ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ GAVAR BRANCH	ՀՀ, 1201, ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ N10 N. 10 Central Square, Gavar, 1201, RA	+374 10 510910 (5501) +374 10 510910 (5502)
«ԳԼԽԱՄԱՍ» HEAD OFFICE	ՀՀ, 0002, ք. Երևան, Ամիրյան փ. 23/1 23/1 Amiryan St., Yerevan, 0002, RA	+374 10 510910 (9014)
«ԳՅՈՒՄՐԻ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ GYUMRI BRANCH	ՀՀ, 3104, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Արովյան փ. N 244 244 Abovyan St., Gyumri, 3104, RA	+374 10 510910 (1201) +374 10 510910 (1202)
«ԳՈՐԻՍ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ GORIS BRANCH	ՀՀ, 3201, ք. Գորիս, Մաշտոցի փ. 4 4 Mashtots St., Goris, 3201, RA	+374 10 510910 (2901) +374 10 510910 (2902)
«ԴԱՎՏԱՇԵՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ DAVTASHEN BRANCH	ՀՀ, 0054, ք. Երևան, Դավթաշեն Տիգրան Պետրոսյան փ. 44/2 44/2 Tigran Petrosyan St., Davtashen, Yerevan, 0054, RA	+374 10 510910 (6701) +374 10 510910 (6702)
«ԴԱՎԻԹ ԱՆՀԱԿԻՏ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ DAVIT ANHAKHT BRANCH	ՀՀ, 0069, ք. Երևան, Դրոյի փ. 3 3 Dro St., Yerevan, 0069, RA	+374 10 510910 (5901) +374 10 510910 (5902)
«ԵԴԵԳՆԱԶՈՐ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ YEGHEGNADZOR BRANCH	ՀՀ, 3601, ք. Եդեգնաձոր, Նարեկացի փ. 18 18 Narekatsi St., Yeghegnadzor, 3601, RA	+374 10 510910 (5301) +374 10 510910 (5302)
«ԵՐԵՎԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ YEREVAN BRANCH	ՀՀ, 0026, ք. Երևան, Սմբատ Զորավարի փ. 11/1 11/1 Smbat Zoravar St., Yerevan, 0026, RA	+374 10 510910 (6401) +374 10 510910 (6402)
«ԶԵՅԹՈՒՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ZEYTUN BRANCH	ՀՀ, 0069, ք. Երևան, Քանաքեռ- Զեյթուն համայնք, Դավիթ Անհաղթի փ. 11/1 և 11/2 11/1 and 11/2 D. Anghaght St., Kanaker-Zeytun Distr., Yerevan, 0069, RA	+374 10 510910 (5101) +374 10 510910 (5102)
«ԷՃՄԻԱԾԻՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ECHMIADZIN BRANCH	ՀՀ, 1101, ք. Էջմիածին, Մաշտոցի փ. 8 և 8ա/28 8 and 8a/28 Mashtots St., Echmiadzin, 1101, RA	+374 10 510910 (1101) +374 10 510910 (1102)
«ԷՐԵՐՈՒՆԻ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ EREBOUNI BRANCH	ՀՀ, 0005, ք. Երևան, Արցախի փող. 24 24 Artsakh St., Yerevan, 0005, RA	+374 10 510910 (0601) +374 10 510910 (0602)
«ԷՐԵՐՈՒՆԻ-1» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ EREBOUNI-1 BRANCH	ՀՀ, 0087, ք. Երևան, Տիտոգրադյան փող. 14 14 Titogradyan St., Yerevan, 0087, RA	+374 10 510910 (3101) +374 10 510910 (3102)
«ԹՈՒՄԱՆՅԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ TUMANYAN BRANCH	ՀՀ, 1701, ք. Ալավերդի, Թումանյան փ. 44 բանկ 44 Bank, Tumanyan St., Alaverdi, 1701, RA	+374 10 510910 (1801) +374 10 510910 (1802)
«ԻՋԵՎԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ IJEVAN BRANCH	ՀՀ, 4001, ք. Իջևան, Անկախության փ. 1բ 1B Ankakhoutyan St., Ijevan, 4001, RA	+374 10 510910 (5001) +374 10 510910 (5002)
«ԽՈՐՀՐԴԱՅԻՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ KHORHRDAYIN BRANCH	ՀՀ, 0056, ք. Երևան, Նորքի 1-ին մ/շ, 14/15 14/15 Nork 1st Microdistrict, Yerevan, 0056, RA	+374 10 510910 (0701) +374 10 510910 (0702)
«ԿԱՊԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ KAPAN BRANCH	ՀՀ, 3302, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան փ. 29/1, 4, 29/7 29/1, 4, 29/7 Shahumyan St., Kapan, 3302, RA	+374 10 510910 (6601) +374 10 510910 (6602)
«ԿԵՆՏՐՈՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ KENTRON BRANCH	ՀՀ, 0010, ք. Երևան, Արամի փող. 3 և 5 շենք 3, 5 Aram St., Yerevan, 0010, RA	+374 10 510910 (3001) +374 10 510910 (3002)

«ԿՈՄԻՏԱՍ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ KOMITAS BRANCH	ՀՀ, 0033, ք. Երևան, Արաբկիր, Կոմիտաս պող. 3 շենք, 47 տարածք 47 area, 3 Komitas Ave., Yerevan, 0033, RA	+374 10 510910 (6301) +374 10 510910 (6302)
«ԿՈՏԱՅՔ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ KOTAYK BRANCH	ՀՀ, 2205, ք. Արմավյան, Հատիսի փ. 1/80/8 1/80/8 Hatis St., Abovyan, 2205, RA	+374 10 510910 (6501) +374 10 510910 (6502)
«ՀՐԱԶԴԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ HRAZDAN BRANCH	ՀՀ, 2301, ք. Հրազդան, Կենտրոն բաղամաս, Սահմանադրության հրապ. ք. 2/3 2/3 Constitution Square, Hrazdan, 2301, RA	+374 10 510910 (1501) +374 10 510910 (1502)
«ՀՐԱԶԴԱՆ-ՄԻԿՐՈ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ HRAZDAN-MIKRO BRANCH	ՀՀ, 2302, ք. Հրազդան, Բաղրամյան պող., Զ. Անդրանիկի 140 140 Z. Andranik, Baghranyan Ave., Hrazdan, 2302, RA	+374 10 510910 (5701) +374 10 510910 (5702)
«ՄԱԼԱԹԻԱ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ MALATIA BRANCH	ՀՀ, 0004, ք. Երևան, Մալաթիա Սեբաստիա, Անդրանիկի փ. 10/1 և 141/1 10/1, 141/1 Andraniki St., Malatia Sebastia, Yerevan, 0004, RA	+374 10 510910 (6801) +374 10 510910 (6802)
«ՄԱՐՏՈՒՆԻ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ MARTOUNI BRANCH	ՀՀ, 1401, ք. Մարտունի, Գ. Նժդեհի փ. 2ա 2a G. Nzhdeh St., Martouni, 1401, RA	+374 10 510910 (2501) +374 10 510910 (2502)
«ՄԵՏԱՔՍ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ METAX BRANCH	ՀՀ, 0065, ք. Երևան, Սեբաստիայի փ. 23 ա 23a Sebastia St., Yerevan, 0065, RA	+374 10 510910 (2101) +374 10 510910 (2102)
«ՄՅԱՍՆԻԿՅԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ MYASNIKYAN BRANCH	ՀՀ, 0025, ք. Երևան, Իսահակյան փ. 12 12 Isahakyan St., Yerevan, 0025, RA	+374 10 510910 (0301) +374 10 510910 (0302)
«ՆԱԻՐԻ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ NAIRI BRANCH	ՀՀ, 2401, ք. Եղվարդ, Երևանյան փ. 10ա 10a Yerevanyan St., Yeghvard, 2401, RA	+374 10 510910 (2201) +374 10 510910 (2202)
«ՆԱԻՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ NAIRI MEDICAL CENTER BRANCH	ՀՀ, 0015, ք. Երևան, Պարոնյան փ. 21 21 Paronyan St., Yerevan, 0015, RA	+374 10 510910 (3401)
«ՆԱՆՈ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ NANO BRANCH	ՀՀ, 0001, ք. Երևան, Կենտրոն, Թումանյան փ. 32 շենք, 37 տարածք 37 area, 32 Tumanyan St., Yerevan, 0001, RA	+374 10 510910 (6101) +374 10 510910 (6102)
«ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ NORK-MARASH BRANCH	ՀՀ, 0047, ք. Երևան, Նորքի Այգիներ փ., 238 բն. տուն 238 bld. Norki Ayginer St., Yerevan, 0047, RA	+374 10 510910 (4701) +374 10 510910 (4702)
«ՆՈՒԲԱՐԱՇԵՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ NOUBARASHEN BRANCH	ՀՀ, 0071, ք. Երևան, Նուբարաշեն 7 փ. 2 2, 7 Nubarashen St., Yerevan, 0071, RA	+374 10 510910 (5401) +374 10 510910 (5402)
«ՇԱՀՈՒՄՅԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ SHAHOUMYAN BRANCH	ՀՀ, 0088, ք. Երևան, Մազմանյան փ. 5 5 Mazmanyanyan St., Yerevan, 0088, RA	+374 10 510910 (0201) +374 10 510910 (0202)
«ՇԵՆԳԱՎԻԹ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ SHENGAVIT BRANCH	ՀՀ, 0026, ք. Երևան, Գարեգին Նժդեհի փ. 28 28 Garegin Nzhdeh St., Yerevan, 0026, RA	+374 10 510910 (0101) +374 10 510910 (0102)
«ՇԻՐԱԿ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ SHIRAK BRANCH	ՀՀ, 3126, ք. Գյումրի, Պ. Սևակի փ. ք. 2 շենք, ք. 3 տարածք 2 P. Sevak St., 3rd Area, Gyumri, 3126, RA	+374 10 510910 (5201) +374 10 510910 (5202)
«ՌՈՍԻԱ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ROSSIA BRANCH	ՀՀ, 0010, ք. Երևան, Տիգրան Մետ պող. 16 16 Tigran Mets Ave., Yerevan, 0010, RA	+374 10 510910 (5601) +374 10 510910 (5602)
«ՌՈՍԻԱ - 1» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ROSSIA - 1 BRANCH	ՀՀ, 0018, ք. Երևան, Տիգրան Մետի պող. 16/4 16/4 Tigran Mets Ave., Yerevan, 0018, RA	+374 10 510910 (7201) +374 10 510910 (7202)
«ՍԱԽԱՐՈՎ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ SAKHAROV BRANCH	ՀՀ, 0010, ք. Երևան, Նալբանդյան փ. 48/1 48/1 Nalbandyan St., Yerevan, 0010, RA	+374 10 510910 (6001) +374 10 510910 (6002)
«ՍԱՐԱՋՈՎ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ SARAJOV BRANCH	ՀՀ, 0010, ք. Երևան, Տիգրան Մետի պող., 25 շ., 27 շինություն և Տիգրան Մետի պող., 25 շ., 24 շինություն Bld. 27 and 24, 25 Tigran Mets Ave., Yerevan, 0010, RA	+374 10 510910 (4801) +374 10 510910 (4802)
«ՍԵՎԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ SEVAN BRANCH	ՀՀ, 1501, ք. Սևան, Նաիրյան փ. 141-3 141-3 Nairyan St., Sevan, 1501, RA	+374 10 510910 (1401) +374 10 510910 (1402)
«ՍԻԼԱԽԻ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ SILACHI BRANCH	ՀՀ, 0018, ք. Երևան, Կենտրոն, Նար-Դոսի փ. 2-րդ վարչ. շենք 2, Nar-Dos St., Yerevan, 0018, RA	+374 10 510910 (7501) +374 10 510910 (7502)
«ՍՊԱՆԴԱՐՅԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ SPANDARYAN BRANCH	ՀՀ, 0001, ք. Երևան, Արմավյան փ. 22 22 Abovyan St., Yerevan, 0001, RA	+374 10 510910 (0401) +374 10 510910 (0402)
«ՍՊԻՏԱԿ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ SPITAK BRANCH	ՀՀ, 1804, ք. Սպիտակ, Շահումյան փ. 5 5 Shahumyan St., Spitak, 1804, RA	+374 10 510910 (1701) +374 10 510910 (1702)
«ՎԱՆԱԶՈՐ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ VANADZOR BRANCH	ՀՀ, 2001, ք. Վանաձոր, Տիգրան Մետի պող. 59 59 Tigran Mets Ave., Vanadzor, 2001, RA	+374 10 510910 (1301) +374 10 510910 (1302)
«ՏԻԳՐԱՆ ՄԵԾ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ TIGRAN METS BRANCH	ՀՀ, 0018, ք. Երևան, Տիգրան Մետի փող. 49 և 49 շինություն 1 49 and 49 Bld. 1 Tigran Mets St., Yerevan, 0018, RA	+374 10 510910 (2801) +374 10 510910 (2802)
«ՔԱՆԱԶԵՏ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ KANAKER BRANCH	ՀՀ, 0091, ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն համայնք, Զ. Քանաքեռցու փ. 131 131 Z. Kanakertsu St., Kanaker-Zeytun district, Yerevan, 0091, RA	+374 10 510910 (7401) +374 10 510910 (7402)

Անկախ աուդիտորի եզրակացություն

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street
Yerevan 0015
Republic of Armenia

T +374 10 50 09 64/61

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևանի Պլազա բիզնես
կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9

Հեռ.՝ +374 10 50 09 64/61

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (Բանկ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման էական քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Բանկի՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Բանկից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՍԻ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ նշված պահանջների և ՀԷՄՍԻ կանոնագրքի համաձայն: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք, մեր մասնագիտական դատողության համաձայն, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում՝ որպես մեկ ամբողջություն, և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք այդ հարցերի վերաբերյալ առանձին կարծիք չենք տրամադրում:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստ

Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների նկարագրությունը ներկայացված է ֆինանսական հաշվետվությունների Ծանոթագրություն 4.6-ում, իսկ պարտքային ռիսկի վերլուծությունը՝ Ծանոթագրություն 36.1-ում:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի ձևավորումը համարվում է աուդիտի առանցքային հարց՝ հաճախորդներին տրված վարկերի նշանակալի լինելու, ինչպես նաև արժեզրկման գնահատման հիմքում ընկած ենթադրությունների սուբյեկտիվության պատճառով: Տարբեր դատողությունների և ենթադրությունների կիրառումը կարող է հանգեցնել ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի գնահատման և ձևավորման էականորեն տարբեր արդյունքների, ինչը կարող է էական ազդեցություն ունենալ Բանկի ֆինանսական արդյունքների վրա:

Դատողությունների առանցքային ոլորտները ներառում են ՖՀՄՍ 9-ի կիրառման ժամանակ արժեզրկման որոշման պահանջների մեկնաբանումը, որը արտացոլվում է Բանկի՝ ակնկալվող պարտքային կորուստների մոդելում, վարկի որակի էական վատթարացման հետ կապված բացահայտումները, նաև ակնկալվող պարտքային կորուստների մոդելում օգտագործված ենթադրությունները, ինչպիսիք են երրորդ կողմի ֆինանսական վիճակը, ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերն ու կանխատեսվող մակրոտնտեսական գործոնները և լրացուցիչ միջոցներ կիրառելու անհրաժեշտությունը՝ արտացոլելու ընթացիկ կամ ապագա արտաքին գործոնները, որոնք պատշաճ կերպով հաշվի չեն առնվել ակնկալվող պարտքային կորուստների մոդելում:

Արժեզրկման մեթոդոլոգիայի հետ կապված իրականացվել են հետևյալ աուդիտորական ընթացակարգերը.

- Ուսումնասիրվել է Բանկի՝ ՖՀՄՍ 9-ի հիման վրա արժեզրկման պահուստի ձևավորման քաղաքականությունը և համեմատվել է ՖՀՄՍ 9-ի պահանջների հետ:
- Գնահատվել է ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի որոշման ժամանակ օգտագործվող տեղեկատվության նկատմամբ վերահսկողության համապատասխան գործիքների կառուցվածքը և թեստավորվել է դրանց գործառնական արդյունավետությունը՝ ներառյալ վարկի ձևավորման պահին ստացված գործարքային տվյալները, վարկային որակի շարունակական ներքին գնահատումները, ակնկալվող պարտքային կորուստների մոդելի տվյալների և ինտերֆեյսի պահպանումը:
- Գնահատվել է ակնկալվող պարտքային կորուստների մոդելի նկատմամբ վերահսկողության համապատասխան գործիքների կառուցվածքը և թեստավորվել է դրանց գործառնական արդյունավետությունը՝ ներառյալ մոդելի կառուցումը և հաստատումը, շարունակական վերահսկումը/հավաստիացումը, մոդելի կառավարումը և թվաբանական ճշգրտությունը:
- Ստուգվել է Բանկի՝ պարտքային ռիսկի էական աճի որոշման և ռիսկերի հակվածությունը տարբեր փուլերում դասակարգելու հիմնավորվածությունը:
- Ռիսկերի որոշակի ընտրանքի համար ստուգվել է Բանկի փուլավորման ճշտությունը:
- Գնահատվել և թեստավորվել են մոդելավորման էական ենթադրությունները՝ կենտրոնանալով Բանկի կողմից ընդունված մոդելավորման առանցքային ենթադրությունների վրա, և պահուստների զգայունությունը մոդելավորման ենթադրությունների փոփոխությունների նկատմամբ:
- Բանկի ղեկավարության կողմից ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկներում օգտագործված կանխատեսվող ենթադրությունների հետ կապված քննարկումներ են անցկացվել ղեկավարության հետ, որի ընթացքում ենթադրությունները հաստատվել են՝ օգտագործելով հանրամատչելի տեղեկատվությունը:
- Ուսումնասիրվել են ռիսկերի ընտրանքային օրինակներ և իրականացվել ընթացակարգեր՝ վարկային որակի էական վատթարացման ռիսկերի ժամանակին բացահայտելու և անհատապես գնահատված ռիսկերի գծով ակնկալվող կորուստների հաշվարկը գնահատելու նպատակով:
- Ստուգվել է 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի հաշվարկում ընդգրկված վարկերի և փոխատվությունների, արտահաշվեկշռային հոդվածների, ներդրումային արժեթղթերի, տեղաբաշխումների և այլ ֆինանսական ակտիվների ամբողջականությունը: Ստուգվել են կիրառված մոդելների տեսական հիմքերը, և թեստավորվել է դրանց մաթեմատիկական ամբողջականությունը:

- Արտաքին աղբյուրներից ստացվող տվյալների մասով վերանայվել է նման տվյալների ընտրության գործընթացը, Բանկի համար դրա տեղին լինելը և նման տվյալների նկատմամբ վերահսկողության ու կառավարման մեխանիզմը:
- Մեր SS ոլորտի մասնագետները ներգրավվել են հատուկ փորձառություն պահանջող ոլորտներում (օրինակ՝ տվյալների հուսալիություն և ակնկալվող պարտքային կորուստների մոդել):
- Գնահատվել է ֆինանսական հաշվետվություններում բացահայտումների ճշգրտությունը:

Այլ տեղեկատվություն

Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Այլ տեղեկատվությունը բաղկացած է Բանկի՝ 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար տարեկան հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվությունից, սակայն չի ներառում ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը: Ակնկալվում է, որ տարեկան հաշվետվությունը մեզ հասանելի կլինի սույն աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո:

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք դրանց վերաբերյալ որևէ ձևի հավաստիացման եզրակացություն չենք արտահայտելու:

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված մեր պարտավորությունն է ծանոթանալ վերը նշված այլ տեղեկատվությանը, երբ այն հասանելի լինի մեզ՝ որոշելու համար, թե արդյոք առկա են էական անհամապատասխանություններ այլ տեղեկատվության և ֆինանսական հաշվետվությունների կամ աուդիտի ընթացքում ձեռք բերված մեր գիտելիքների միջև, կամ արդյոք այլ տեղեկատվությունը պարունակում է այլ էական խեղաթյուրումներ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

